



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

835  
U-87

*guide*

*task*

02 AUG 2013

30 MAY 2011

Նուէր մանուկներին

345

Ե. ՍՊԻՐԻԴ

87

# Լեռն Ազգիկը

425/5



Փոխադրեց օք. Մատուցութեան

Ա. Շ.	ԲԱԺԻՆ
ԲԱԺԻՆԻ №	512
ԳՐ. Ք. Ի. Խ. Ա.	

Տպարան Կ. Մարտիրոսյանցի

1902



Дозволено цензурою. Тифлисъ 13-го марта 1902 г.

## ՊԱՊԻ ՄՕՏ ԳՆԵԼԸ



լպեան սարերի բնութագրութէ<sup>ւ</sup>  
զտնում էր հինաւուրց  
Մայնֆելդ քաղաքը:  
Այստեղից հաղիւ նկա-  
տելի մի նեղ շաւիդ  
գնում էր դէպի վեր,  
իսկ աւելի բարձր՝ այդ  
շաւիդը գալարուելով ալէման բարձրութիւնների  
վրայ՝ զիք բարձրանում էր դէպի սարը:

Յունիս ամիսն էր. օրը պայծառ: Այդ նեղ  
շաւզով՝ հինգ տարեկան աղջկայ ձեռիցը  
բռնած՝ գնում էր մի բարձրահասակ և առող-  
ջակապմ կին: Չնայած որ ամառ էր, երեխա-

լին շատ տաք էին հազրել, իսկ հին գլխարկի տակից երեսում էին նրա կարծիք այտերն ու սև աչկները:

Պօտ մի ժամ բարձրանում էին մեր ճամբորդները. վերջապէս հասան Գերֆլի փոքրիկ գիւղը և կանգ առան մի փոքրիկ տնակի առաջ:

— Սպասիր, Նունէ, ես այս ըոպէին դուրս եմ դալիս, լսուեց ներախց:

Այդ ժամանակ փոքրիկը նստեց գետնի վրայ:

Յողնեցիր, Հայդի, Հարցրեց նրան ուղեկիցը:

— Ոչ. միայն շողեցի:

— Մի ժամից յետոյ քեռու մօտ կըլինինք: Տնակից գուրս եկաւ մի հաստ-հաստ կին և սրանց հետ միանալով՝ շարունակեցին ճանապարհը:

— Ո՞ւր ես գնում երեխայի հետ, Նունէ, Հարցրեց Եղսին, դա կարծեմ քրոջդ աղջիկն է, չէ:

— Այս. տանում եմ քեռու մօտ և այստեղ էլ կըմնայ:

— Ի՞նչպէս, այսպէս փոքրիկ երեխային,

թողնելու ես քեռու մօտ, բայց չէ որ նա մէն-մենակ ապրում է սարի ծալրին. երեխան ի՞նչ-պէս կարող է նրա մօտ դիմանալ. իսկ դու ի՞նչ ես անելու:

— Ես գնալու եմ Փոանկֆուրտ այն ընտանիքը, որի մօտ անցեալ տարի ծառայում էի, նրանք ինձ ինգրեցին, որ ձմեռն էլ գնամ. ես չհամաձայնուեցի, իսկ այժմ անպատճառ պիտի գնամ:

— Բայց ի՞նչ կըլինի երեխայի դրութիւնը, մի մտածիր, Նունէ:

— Մտածելու բան չկայ, Եղսի. բայց ես պարմանում եմ, որ Դերֆլում ամենքը նրան քեռի են կոչում և միւնոյն ժամանակ այնպէս վաստ կարծիք ունին նրա մտախն. ի՞նչ անենք թէ նա միայնակ կեանք է վարում և ոչոքի մօտ չի լինում, կըրելի է շատ վշտացած է և էլ չի ուզում ոչոքի երեսը տեսնել: Ի՞նչ ես կարծում, որքան ծանր պէտք է լինէր նրա համար իւր միակ որդու մահը. իսկ Հայդին այն մեռած որդու աղջիկն է, և նա պարտաւոր է պահելու իւր այս թուանը:

Մինչդեռ որանք այսպէս խօսում էին

Հայդին անյալտացել էր. շատ դէս ու դէն նա-  
յելով՝ նրանք նկատեցին, որ նա Պետրոսի ու  
նրա այծերի հետ միասին մազլցում էր սարի  
վրայ: Եղսին կանգ առաւ մի հին խրճիթի մօտ  
ու ասայ:

— Յտեսութիւն, Նունէ, ես այստեղ եմ  
մտնելու: Նունէն ձեռը մեկնեց իւր ուղեկցին և  
նրանք բաժանուեցին: Եղսին մտաւ մի հին  
ու փոքրիկ խրճիթ, որ գտնուում էր կաթսա-  
յանման վոս տեղում և ամեն կողմից պաշտպա-  
նուած էր քամուց:

Այս խրճիթում ապրում էր մի 11 տարեկան  
տղայ Պետրոս անունով, որ ամեն առաւօտ Պերֆ-  
լում հաւաքում էր այծերը և սարը տանում  
արածացնելու: Իսկ երբ այնտեղից վերագառնում  
էր և զիւղը հասնում, նա մատները բերանը  
գնելով՝ մի տեսակ շուացնում էր, և տէրերը  
ճանաչելով այդ շուացը՝ դուրս էին գալիք ու  
իրանց այծերն ընդունում:

Գլուղի երեխաները շրջաբստում էին այծերի  
փոքրիկ հօտը և Պետրոսի համար օրուայ մէջ այդ  
միակ ժամանակն էր, երբ նա կարողանում էր իւր  
հասակից տղաների հետ մի քիչ խօսել: Նա

ապրում էր մօր և կոյր տատի հետ: Առաւօտ-  
ները շատ վաղ էր վեր կ'ենում, իսկ երեկոները  
այնքան ուշ էր վերադառնում, որ իսկոյն ընթ-  
րելով՝ քաղցր քուն էր մտնում:

Ահա այդ Պետրոսն էր, որի հետ միացել  
էր մեր փոքրիկ ճամբորդը: Հայդին սկըզ-  
բում դժուարութեամբ էր մազլցում. այն ինչ  
Պետրոսը իւր կարձիկ շալվարով ու բոբիկ ոտ-  
ներով նոյնչափ հեշտութեամբ էր թռչկոտում  
քարերի վրայ, որչափ իւր այծերը: Յանկարծ  
Հայդին նստեց գետնի վրայ, հանեց բոլոր շո-  
րերը, միատեղ դարսեց և շապկանց ու տակի  
շրջազգեստով մնալով՝ ուրախ-ուրախ սկսեց  
թռչկոտել Պետրոսի ու նրա այծերի հետ: Այ-  
նուհետեւ նա սկսեց Պետրոսին զանազան հար-  
ցեր տալ. թէ քանի այծ ունի, ուր է տանում,  
այնտեղ վերև ինչ են շինում և այն և այն:

Պետրոսը հազիւ կարողանում էր նրա բո-  
լոր հարցերին պատասխանել:

Այսպիսով նրանք հասան Նունէին, որը  
զարմացած դուաց.

— Հայդի, այդ ինչ ես արել, ինչի նման  
ես, որտեղ են շորերդ:

«Այնտեղ է», հանդարտութեամբ ասաց աղջիկը և ձեռը մեկնեց դէպի ներքեւ:

—Թշուառական, գոչեց նա, այդ որ քամին փչեց խելքդ, որ շորերդ հանել ես և ինչո՞ւ:

—Ճորերս ինձ հարկաւոր չեն, անտարբեր պատասխանեց աղջիկը:

—Այս, դու խղճուկ, լիմար, յանդիմանում էր Նունէն, ով պիտի գնայ շորերդ բերելու, երկի մի կէս ժամուայ ճանապարհ կրլինի: Կը սիր, Պետրոս, ինչ կրլինի վաղես, շորերը բերես, ես քեզ փող կրնծայեմ:

Պետրոսն իսկոյն վաղեց, առաւ չայդիի շորերը և շտապով վերադարձաւ: Նունէն գովեց նրան, մի դրամ տուեց ու ասաց.

—Պետրոս, բեր այդ կապոցը մինչև քեռու տունը, չէ՞ որ դու առանց այն էլ գալու ես այնտեղ:

Պետրոսը համաձայնուեց և միասին գընացին: Հայդին այծերի հետ թուշկոտելով գընում էր նրանց ետևից:

Վերջապէս նրանք հասան սարի գագաթը, որտեղ շինուած էր ծերունի քեռու խրճիթը:

Խրճիթի ետև կալին երեք ահագին եղևնի երկար ու տարածուած ճիւղերով, լոկ միւս կողմը, որտեղից դիմացի գեղեցիկ հովիտն էր երկում, ծերունի քեռին մի նստարան էր շինել իւր համար և հէնց այդ ըսպէին վրան նստած՝ հանդիստ ծխում էր և նայում, թէ ինչպէս մարզգելով բարձրանում էին Նունէն ու չայդին Պետրոսի առաջնորդութեամբ: Թուշկոտող այծերի կայտառ հօտը շրջապատել էր ճամբորդներին: Ամենից առաջ չայդին հասաւ ծերունուն, մօտեցաւ նրան, ձեռը մեկնեց ու ասաց.

—Բարեւ ձեղ, պապի:

Ֆերունին զարմացած առաւ երեխայի ձեռը և երկար ժամանակ նայում էր նրա երեսին: Հայդին նոյնպէս չուած աչերով նայում էր նրան. պապը իւր երկար ու սպիտակ միքուքով և խիտ ու միացած յօնքերով տարօրինակ մարդ էր թւում նրան:

Նունէն երկար ժամանակ նայելով նրանց վրայ վերջապէս ասաց.

—Բարի օր, քեռի, ես բերել եմ ձեղ մօտ ձեր թոռին, իսկ իմ քրոջս՝ աղջկան: Քրոջս մահից յետոյ դրան այլ ես չէիք տեսել:

— Ի՞նչ է ուզում երեխան ինձանից, հարց-  
րեց ծերունին. իսկ դռ, Պետրոս, ինչու այս-  
պէս ուշ եկար, դէհ, շուտ արա, իմ այծերին  
էլ քշիր ու գնա:

Պետրոսը վախեցաւ ու շտափեց իւր գոր-  
ծին գնալու:

— Ես ուզում եմ երեխալին ձեզ մօտ թող-  
նել, ասաց Նունէն. այժմ ձեր հերթն է դրա  
մասին հոգս քաշելը, ես այլ ևս չեմ կարող:

— Լաւ, ասաց ծերունին, բայց եթէ դա սկսէ-  
լաց ու կոծ անել, այն ժամանակ ես ինչ անեմ:

— Արա ինչ որ կամենում ես, ես էլ չգիտէի  
երեխայ պահել, բայց երբ մի տարեկան չայդին  
անտէր մնաց, ես իմ պարտականութիւնու հա-  
մարեցի նրան խնամել և ահա մինչեւ հիմա  
մօտս պահեցի: Դուք նրա պապն էք, քեռի,  
և եթէ նրան անխնամ թողնէք դուք էք պա-  
տասխանատու:

Նունէն, հակառակ իւր կամքի, էլի շատ  
վիրաւորական խօսքեր վրայ տուեց, որից ծե-  
րունին սաստիկ զայրացաւ ու գոռաց.

— Գնա, որտեղից եկել <sup>կ</sup>այնտեղ էլ գնա  
և այլ ևս աչքիս չերևաս.

Նունէն հէնց այդ էր ուզում. շտափով  
մնաս բարով ասաց ու հեռացաւ: Նա ուզեռ-  
ուեց դէպի Խերֆլի զիւղը, բայց իւր արածի  
վրայ մտածելով ցաւում էր, որովհետեւ չայդիի  
մայրը մեռնելիս՝ նրան էր յանձնել իւր աղջ-  
կան, իսկ ինքը ստիպուած եղաւ նրանից բա-  
ժանելու:

Բայց յետոյ նա ինքն իրան միսիթարեց  
մտածելով՝ որ իւր աշխատած փողերով չայդիի  
համար ընծաներ կառնէ:



— Գնանք, միայն քո կապոցը հետդ վերց-  
րու:

— Սա ինձ հարկաւոր չէ, ընդդիմախօսեց  
Հայդին:

Թերունին ուշադրութեամբ նայեց աղջկան,  
որի սևորակ աշերը փայլում էին հետաքրքրու-  
թիւնից, թէ ինչ պիտի տեսնի պապի սենեա-  
կում:

— Ինչո՞ւ չի հարկաւոր կապոցդ, հարցրեց  
ծերունին:

— Ես ուզում եմ այնպէս ման գալ, ինչ-  
պէս այծերը, իսկ նրանք ինչ սիրուն ու թեթև  
ոտիկներ ունին:

— Բհ՛ը, բայց և այնպէս վերցրու կապոցդ,  
պահարանում կըպահես:

Հայդին համաձայնուեց և երկուսն էլ ներս  
մտան մի մեծ սենեակ, որի մէջ տեղը գլ-  
րած էր սեղան և մի աթոռ: Մի անկիւնում  
դրուած էր մահճակալ, իսկ միւսում հնոց կար  
շինած և մէջը կաթսալով կերակուր էր եփ-  
ւում: Ուղիղ մուտքի դիմաց մի մեծ դուռ կար.  
պապը բաց արեց այդ դուռը. զա պահարան  
էր, որի մէջ ծերունու շորերն էին կախուած.

թ.

## ՊԱՊԻ ՄԾՏ

 ունէի գալուց յետոյ քեռին նստեց իւր  
տեղում, վառեց չիրուխը և սկսեց ձխի ահա-  
գին քուլաներ արձակել: Նա բոլորովին անու-  
շադիր թողեց երեխային և մտածմունքի մէջ  
խորասուզուած՝ նայում էր իւր առաջ մի կէտի:

Հայդին իւր շուրջը նայեց և այծերի քողը  
(գոմը) նկատելով՝ մօտեցաւ, ներս նայեց և տե-  
սաւ որ դատարկ էր. յետոյ գնաց խրճթի ետև,  
որտեղ կալին հին եղեւնիներ. այստեղից կրկին  
դարձաւ պապի մօտ, նա դարձեալ նոյն դիր-  
քով նստած՝ լուռ ծխում էր: Հայդին մօտեցաւ  
նրան և ձեռները մէջքին դրած՝ նայում էր  
պապին:

— Ի՞նչ ես ուզում, վերջապէս հարցրեց  
ծերունին:

— Ես ուզում եմ տեսնել, ինչ ունիս տան  
մէջ, համարձակ պատսսխանեց Հայդին:

միջի դարակներից մէկի վրայ նրա սպիտակեղինն էր դարսած, իսկ միւսի վրայ ամանեղին, հաց, պանիր ու միս: Քուռ բոլոր ունեցած-չունեցածը այս պահարանումն էր գտնուում: Հայդին իւր կապոցն էլ մէջը ձգեց. յնտոյ սենեակն աչքով անցրեց ու ասաց.

— Ես որտեղ պիտի քննեմ, պապի:

— Ո՞րտեղ որ ուզում ես, պատասխանեց ծերը:

Հայդին չորս կողմը նայեց և տեղ էր որոնում իւր համար. պապի մահճակալի մօտ փոքրիկ սանդուխք էր դրսւած, որով նա բարձրացաւ կտուրը. այնտեղ բուրում էր թարմ խոտի անուշ հոտը, որովհետեւ այնտեղ էր դրտնում խոտնոցը. մի փոքրիկ կլոր պստուհան էր կար շինած, որտեղից դիմացի սարերի և հովիտների հիանալի տեսարանն էր երեւում:

— Ես այստեղ կը քննեմ, հրճուանքով բացագանչեց Հայդին. ինչպէս լաւ է այստեղ. ես ինձ համար յարմար անկողին կը շինեմ մինչ դու մի սաւան բեր ինձ:

— Լաւ, ասաց պապը, և ներքև իշնելով՝ պահարանից հանեց մի կոշտ շոր:

— Ահա քեզ և սաւան, ասաց նա վերև բարձրանալով: Յետոյ երկուսով սկսեցին անկողինը կարգի բերել. տակը բաւական խոտ փըսեցին, որ վավուկ լինի, իսկ գլխի տակ աւելի բարձր շինեցին. այնուհետեւ սաւան ձգեցին վրան և Հայդին ուղղեց ափերը՝ քիշ-քիչ խոտի տակ կոխելով: Անկողինն արդէն պատրաստ էր: Հայդին մի փոքր մտածելուց յնտոյ դոչեց.

— Մենք մի բան մոռացանք, պապի:

— Ի՞նչը:

— Վերմակը. երբ պառկում ենք քննելու, չէ՞ որ մի բանով պիտի ծածկուենք:

— Ճշմարիտ է, բայց եթէ ես վերմակ չունենամ:

— Վես չոնի, պապի, միւսնոյն է, դրա փոխարէն ես վրաս էլ խոտով կը ծածկեմ:

— Կաց, ես կը գտնեմ և իշնելով ներքեւ բերեց իւր հետ մի մեծ հաստ տոպրակ:

— Սա միթէ խոտից լաւ չէ, ասաց նա:

Հայդին բոլոր ոչիք գործ դրեց, որ տոպրակը վերցնէ, անկողնու վրայ ձգէ, բայց ըլկարողացաւ. այդ բանումն էլ պապը նրան օգնեց:

— Դէ՛ն, Հիմա դնանք, մի քիչ բան ուտենք, ասաց պապը:

Հայոթին այնպէս զբաղուած էր, որ ամեն ինչ մոռացել էր, իսկ երբ ուտելու մասին լիշտցրին, զգաց որ ինքը քաղցած էր. առաւօտից նա ոչինչ չէր կերել, այն ինչ բաւական երկար ճանապարհը ուտով էր անցել:

— Այ՞, պապի, դնանք ուտենք:

Եւ նրանք վայր իջան նոյն սանդուխքով:

Ֆերունին մօտեցաւ հնոցին, նստեց ցածր աթոռի վրայ և սկսեց կրակը փչել: Վրայի կաթսան թշրշաց, միջի կաթը եփ եկաւ. իսկ պանրի մեծ կտորը, որ ծերունին բռնել էր մեծ պատաւաքաղով և շուռ ու մուռ էր տալիս ամեն կողմից դեղնեց: Հայոթին ամենայն ուշադրութեամբ նայում էր, իստոյ հեռացաւ այնտեղ և պահարանի մօտ վագեց: Ֆերունին երբ սեղանին մօտեցաւ, տեսաւ որ սեղանն արդէն դցած է, վրան դրած է մի կոլոր հաց, երկու աման և երկու դանակ:

— Ապրի իմ աղջկիս, ամեն բան լաւ պատրաստել ես, բայց դու որտեղ պիտի նստես:

Մի հատ աթոռ կար, որի վրայ ինքն էր

նստած, Հայոթին վաղեց և հնոցի առաջ դրած աթոռը բերեց իւր համար:

— Այդ լաւ, բայց շատ ցածր է, իմ աթռուի վրայ էլ նստես՝ սեղանին չես հասնի: Ահա թէ ինչ կանենք:

Եւ նա իւր աթռուի վրայ դրեց կաթնով վեք ամանը, մի կտոր հաց և տապակած պանրից էլ:

— Այժմ կարող ես ուսել, ասաց նա և ինքն էլ նստեց սեղանի ծալրին ու սկսեց ուտել:

Հայոթին գեռ ճանապարհին ծարաւ էր, այնպէս որ կաթնով ամանը վերցրեց ու միանդամից դատարկեց:

— Հաւանեցիր կաթը, հարցրեց պապ:

— Երբէք այսպիսի համով կաթ չեմ խմել, պատասխանեց Հայոթին:

Պապը երկորդ անդամ լցրեց ամանը և տուեց:

Ճաշը վերջացնելուց յետոյ, պապը Հայոթին կնաց այծերի քողը. նա մաքրեց, կարգի բերեց քողը և թարմ խոտ դրեց նրանց համար: Այնուհետև չորս հատ կոլոր վայտ կտրեց, մի քառակուսի տախտակ վերցրեց, բոլոր անկիւն-



ների մօտ փորեց, վորած տեղերը դրեց այն չորս փայտի ծալքերին, ամրացրեց մեխերով և շինուեց ուղիղ իւր աթոռի նման մի աթոռ, միայն աւելի բարձր:

Հայդին զարմացած նայում էր պապի պատապմունքին;

— Այ ինչ է, Հայդի, հարցրեց պապը:

— Թա իմ աթոռն է, բայց ինչպէս բարձր է և ինչպէս շուտ շինեցիր, պապի, նկատեց Հայդին:

«Ի՞նչ աչքաբաց երեխայէ, հէնց ամեն բան նկատում է», ինքն իրան մտածում էր պապը:

Մութն արդէն ընկել էր, երբ նրանք իրճիթ վերադարձան: Հին եղենիների լիտ ճիւղերը աղմկում էին քամուց: Այ անսովոր աղմուկը Հայդիին շատ էր դուր դալիս. նա ուրախուրախ թռչկոտում էր, մէկ ծառից հեռանում, միւսի մօտ էր վագում. իսկ պապը դռան շէմքին կանգնած՝ նայում էր նրան: Յանկարծ մի սուլոց լսուեց: Հայդին կանդ առաւ և տեսաւ որ սարից իջնում էր Պետրոսը իւր այծերի հետ. նա ուրախ ճշոցալ առաջ վագեց և հօտի մէջ խառնուելով փաթաթուեց

լուր հին ծանօթներին: Երբ նրանք խրճին հասան, այծերից երկուսը, սմենասիրունները, սպիտակ և խարտեաշ գոյնով, պապի մօտ վագեցին և սկսեցին լիդել նրա բռի միջի աղը: Պետրոսը մնացած այծերի հետ շարունակեց իւր ճանապարհը:

Հայդին անչափ ուրախ էր. նա ձեռով շոյում էր այծերից մէկին կամ միւսին:

— Սրանք մերն են, պապի, երկուսն էլ մերն են. սրանք քողը կերթան քնելու և միշտ մեզ մօտ կըմնան:

— Այն, այն, բոլոր հարցերին պատասխանում էր ծերունին:

— Հայդի, գնա քո ամանը և մի քիչ էլ հաց բեր:

Աղջիկը բերեց:

Պապը կժեց սպիտակ այծը, ամանը լցրեց և Հայդիին տալով ասաց.

— Խմիր և գնա քնելու, իսկ ես այծերին պիտի ներս տանեմ: Գլշեր բարի:

— Լոյս բարի, պապի. իսկ ինչպէս են ողբանց անունները, կրկին յետ դառնալով հարցրեց աղջիկը:

— Սպիտակի անունն է Ճէկօ, իսկ խարստեաշինը՝ Պօզօ:

— Բարի գիշեր, Ճէկօ, բարի գիշեր, Պօզօ, ուրախ կանչում էր Հայդին:

Յետոյ նա գնաց նստեց խրճիթի առաջ նստարանի վրայ և կերաւ իւր հացն ու կալթը: Քամին սաստկացաւ և ուղղակի նրա երեսին էր փչում: Նա շտապով խրճիթը մտաւ, վեր բարձրացաւ և յոցնած ընկաւ անկողնու վրայ ու խորշքունք մտաւ: Պապն էլ տուն վերադարձաւ և երբ մութն ընկաւ, պառկեց քնելու:

Գիշերը սաստիկ մրրիկ էր. քամու կատաղի հարուածներից ամրող խրճիթը շարժում էր, իսկ հին եղենու ճիւղերը ճոճում և շառառում էին:

«Մի գուցէ նա վախենում է», մտածեց ծերունին և բարձրացաւ կտուրը Հայդիի մօտ: Պայցառ լուսնի լոյսը պատուհանից ընկել էր քնած երեխայի վրայ: Հայդին քաղցր քնած էր իւր կոշտ անկողնում ձեռները դէպի վեր տարածած: Աւ դանդուրները ցըռել էին նրա կարմրած երեսի շուրջը, որի վրայ փալում էր անմեղ ժպիտը:

Պապը երկար ժամանակ սիրով նայում էր նրան, մինչև որ լուսնեակը ծածկուեց ամպերի ետև և մութը պատեց:

Ահա այն ժամանակ միայն նա իջաւ և անկողին մտաւ:



Արքայի առաջնահայր

Պետրոսը կանդնած էր իւր հօտի մօտ,  
իսկ պապը քողից դուրս էր բերում իւր այծերը:  
Հայդին բարի լոյս մաղթեց թէ Պետրոսին և  
թէ այծերին:

— Կերթաս դրանց հետ արօտը, հարցըց  
պապը:

Հայդին ուրախութիւնից ոկսեց վեր-վեր  
թռչել:

— Բայց գեռ լուացուիր, արեք քեզ կը-  
տեսնէ այդպէս ու և վրադ կըծիծաղէ:

Աղջիկը գնաց լուացուելու. իսկ պապը  
Պետրոսի պարկի մէջ զրեց մի մեծ կտոր հաց,  
պանիր, սման և ասաց.

— Երեխան չի կարող ուղղակի այծից ծը-  
ծել կաթը, դու կըկթես այս ամանով երկու  
անդամ և ճաշին կըտառ խմելու. նա քեզ մօտ  
մինչև երեկոյ կըմնայ, նայիր, որ ժայռից չնկնի,  
լսում ես:

— Արեք դարձեալ կըծիծաղէ վրաս, պա-  
պի, մօտ վաղելով հարցըց Հայդին:

Նա այնպէս աշխատել էր լաւ լուացուել  
և մաքուր սրբուել կոշտ երեսսրբիչով, որ նրա  
թշերը վարդի գոյն էին ստացել:

¶.

## Ա Ր Օ Տ Ո Ւ Մ

  
Հայդին առաւօտեան շատ վաղ զարթեց-  
նրան զարթեցրեց բարձրածախ սուլոցը: Պայ-  
ծառ արեւ ճառագայթները փոքրիկ պատուհա-  
նից ընկնելով խոտնոցի պատերի ու աղջկայ ան-  
կորնու վրայ՝ ոսկու գոյն էին սփռել: Հայդին հա-  
զիւ դլխի ընկաւ, թէ ինքը որտեղ է գտնուում,  
այն էլ շնորհիւ պապի բարձր ձայնի, որ նը-  
րան սթափեցրեց: Նա մտաբերեց որ ինքն այ-  
ժը գտնուում է ծեր պապի մօտ, Ալմ լերան  
վրայ և ոչ թէ մօրաքրոջ մօտ, որտեղ նրան  
ստիպում էին հանդիստ նստել, մինչդեռ ինքը  
կուգէր վաղին և ուրախանալ: Նա մտաբերեց  
երեկուայ օրը և սաստիկ ցանկացաւ տեսնել  
զէկօլին և Պօղօլին:

Հայդին շտապով վեր թռաւ, մի րոպէ-  
ռում հագնուեց, իջաւ սանդուխքով և դուրս վա-  
րեց խրճթից:

— Ո՞չ այժմ էլ ոչոք չի կարող վրադ ծիծաղել, պատասխանեց պապը: Բայց զիտես ինչ, երբ կը վերադառնաս այստեղից, պիտի մտնես տաշտը և ձլան նման լողանաս: Ով որ այծեթի հետ զբունում է, նրա ոտները թողոտում, սևանում են: Թէ՛, այժմ դնացէք:

Հայդին ուրախ-ուրախ ճանապարհ ընկաւ: Քամին ցրում էր վերջին ամպը և կապուտակ երկնքից արել պայծառ լուսաւորում էր կանաչազարդ սարերն ու նրանց ձիւնապատ գագաթները: Հայդին ուրախ թռչկոտում էր տեղ-տեղ կանգ էր առնում և ծաղիկներ հաւաքում գոգնոցի մէջ: Պիտրոսը իւր այծերի ետևից էր ընկած, որովհետև նրանք էլ Հայդինման թռչկոտում և դէս ու դէն էին վաղգում. իսկ նա շարունակ շուացնում էր և նրանց միատեղ հաւաքում:

— Որտեղ ես, Հայդի, կանչեց նա բարկացած:

— Ես ալստեղ եմ, ձայն տուեց աղջիկը:  
— Եկ ալստեղ, բղաւեց Պիտրոսը, դու վայր կընկնես ժայռից. քեռին պատուիրեց, որ քեզ մենակ չժողնեմ:

Հայդին վագեց նրա մօտ գոգնոցը լի ծաղիկներով:

— Այսօր այդքան բաւական է, ասաց Պիտրոսը, եթէ բոլոր ծաղիկները ալսօր քաղես, վագուան համար էլ բան չի մնալ:

Հայդին շուտով համոզուեց:

«Ի՞նչ լաւ է ամեն օր ալսպէս ծաղիկներ քաղել», մտածեց նա:

Նրանք գնում էին այծերի ետևից, մինչեւ հասան մի փոքրիկ հովտի, որտեղ Պիտրոսը սովորաբար արածացնում էր իւր փոքրիկ հօտը: Այդ հովիտը տարածւում էր եղենիներով ծածկուած քարաժայուի ստորոտում: Միւս կողմը ձըգւում էին ժայռեր, որոնք տեղ-տեղ ահագին անդունդներ էին կազմում: Ուրեմն զուր չէր, որ պապը խստիւ արգելեց Պիտրոսին Հայդիին մենակ չժողնել: Այդ տեղը ինչ-որ վայրենի և վտանգաւոր տեղ էր:

Այստեղ Պիտրոսը տարածուեց գետնի վըրայ, որ մի փոքր հանդստանայ. Հայդին էլ նըստեց Պիտրոսի մօտ և սկսեց իւր շուրջը նախել: Ամեն տեղ խորին լռութեան էր տիրում. երբեմն միայն մեղմ քամին օրօրում էր դաշտի

Ճաղիկները: Պետրոսի քունը տարաւ, խակ չայտին դեռ հիանում էր բնութեան գեղեցկութիւնով: Նա իւր կեանքում առաջին անդամն էր այսպիսի քաղցրութիւն զգում: Հայդին ծըծում էր թարմ օդը, ճաղիկների քնքոյշ հոտը և ցանկանում էր միշտ այնտեղ մնալ:

Նա յանկարծ սուր ձայն լսեց բարձրից, վեր նայեց և տեսաւ մի հազարին թռչուն, որ թերթը լայն բացած մեծ պտոյտներ էր անում օդում և հանդարտ վայր իջնում:

— Պետրոս, Պետրոս, արթնացիր, դուռում էր նա, տես, ինչ մեծ թռչուն է:


Պետրոսը վեր թռաւ. թռչունն այժմ արդէն դէպի վեր էր սլանում. վերջապէս անյայտացաւ սարերի եռեւում:

— Ո՞ւր թռաւ նա, հարցրեց Հայդին:

— Իւր բունը կրմտնէր, պատասխանեց Պետրոսը:

— Այնպէս բարձր. ախ, ինչ լաւ կըլինի այնտեղ: Բայց ինչու նա այնպէս սուր ձայն էր հանում:

— Նա միշտ այնպէս կռնչում է, բայցատը Պետրոսը:



— Ե՛կ, բարձրանանք այնտեղ և տես-  
նենք թէ նա որտեղ է ապրում, առաջարկեց  
Հայդին:

— Օ՛, լինչպէս կարելի է, ասաց Պիտրոսը,  
այնտեղ այծերն էլ չեն կարող բարձրանալ:  
Յետոյ նա սկսեց բոլոր ուժով սուլել և բղաւել:  
Հայդին չէր հասկանում պատճառը. բայց  
այծերը լաւ հասկացան և հաւաքռեցան նը-  
րանց մօտ: Մինչդեռ Հայդին այծերի հետ խա-  
ղում ու թռչկոտում էր, Պիտրոսը սկսեց ճա-  
շի պատրաստութիւն տեսնել. նա բայց տոպ-  
րակը, հանեց միջի եղած չեղածը. զէկօին մօտ  
կանչեց, կթեց նրան, Հայդիի ամանը լցրեց և  
կանչեց նրան ճաշելու:

Հայդին մեծ ախորժակով խմեց երկու ա-  
ման կաթ, խսկ հաց ու պանրի կէսը միայն  
կարողացաւ ուտել, մնացածը տուեց Պիտրոսին:  
Պիտրոսը սկզբում չէր հաւատում, բայց երբ  
Հայդին նրա ծնկան վրայ դրեց հացը, նա ու-  
րախ ժպտաց, շնորհակալութիւն յայտնեց և  
իւր բաժինը վերջացնելուց յետոյ, այն էլ  
կերաւ:

Հայդին դարձեալ այծերի մօտ վաղեց և

խնդրեց Պետրոսին, որ յայտնէ նրանց սննունս-ները: Պետրոսն էլ ամեն մէկի վրայ մատնա-ցոց անելով՝ ասում էր անունը:

Հայդին ամենից շատ հաւանեց սպիտակ Զիւնիկին: Զիւնիկը խղճալի կերպով բառազում էր. Հայդին մօտեցաւ նրան, գրկեց, փաղաք-ցեց և քաղցրութեամբ հարցրեց.

— Ի՞նչ է պատահել քեդ, Զիւնիկ, ինչու ես լաց լինում:

Պետրոսը բացատրեց թէ Զիւնիկը իւր մօր կարօտն է քաշում, որին միքանի օր առաջ ծախել են:

— Այս, դու խղճուկ, ասաց Հայդին քըն-քըութեամբ գրկելով այծին. մի լար, ես ամեն օր քեդ հետ կրզեսնեմ:

Զիւնիկը կարծես հասկանում էր, որ ի-րան փաղաքում են և ինքն էլ գլուխը քը-սում էր Հայդիին:

Համարեա աննկատելի կերպով օրը մթնեց: Հայդին լուռ նստած նայում էր վարդի ծաղիկ-ներին, որոնք վերջալուսի ճառագայթներից ոս-կու գոյն էին ստացել. շուրջը դաշտերի խոտերը կազմըին էին տալիս. իսկ երբ ձիւնապատ դա-

գաթները սկսեցին փայլել և պէծին տալ, նա վեր թռաւ տեղից և աղաղակեց.

— Պետրոս, Պետրոս, տէս, ինչպէս վառ-ւում են սարերը, երկինքը, եղենիները, բոլորը, բոլորը կրակի մէջ են:

— Ո՛հ, ի՞նչ սիրուն է Հրեղէն ձիւնը. նա-մի՞ր, Պետրոս, կրակը թռչուններին էլ հասաւ:

— Այդ կրակ չէ, ասաց Պետրոսը:

— Ապա ի՞նչ է, հարցրեց Հայդին:

— Ելլպէս միշտ լինում է, բացատրեց Պետրոսը:

— Նայի՞ր, Պետրոս, աղաղակեց Հայդին, հիմա էլ բոլորը վարդագոյնի փոխուեց և' ձիւ-նը, և' եղենիները, և' ժայռերը. ի՞նչպէս են կոչւում այդ ժայռերը:

— Նրանք անուն չունին, պատասխանեց Պետրոսը:

— Այս, ի՞նչ սիրուն է վարդագոյն ձիւնը. ի՞նչպէս շատ վարդ կաչ սարերի վրայ. բայց նրանք կրկին մոխրագոյն դարձան. այ, այ, այ, բոլորովին հանգաւ, էլ բան չմնաց, Պետրոս:

Հայդին նստեց և այնպէս տիրեց, կարծես ամեն բան վերջացել էր:

— Վաղը միւնոյն բանը էլի կըկրկնուի,  
մխիթարում էր նրան Պետրոսը, դէ՛հ, վեր կաց,  
տուն դնանք:

Եւ ալծերին միատեղ հաւաքելով՝ ճանապարհ ընկան դէպի տունք:

— Միթէ ամեն օր այսպէսէ լինում, հարցնում էր Հայդին:

— Այօ, համարեա ամեն օր, պատասխանեց Պետրոսը:

— Վաղն էլ այսպէս կըլինի:

— Ի հարկէ:

Հայդին մխիթարուից և ուրախ շարունակեց իւր ճանապարհը: Երբ քեռու խրճիթն եռեաց, Հայդին նկատեց պատին, որ եղենիների տակ նստած նրան էր սպասում, և իսկոյն վազեց նրա մօտ. Ճէկօն ու Պօղօն էլ հետևեցին նրան: Իսկ Պետրոսը միւս այծերի հետ առաջ անցաւ:

— Ախ, պապի, ի՞նչպէս լաւ էր այստեղ, աղաղակեց Հայդին, ժայռերը ծածկուած էին վարդերով, կապոյաւ ու դեղին ծաղիկներով: Տես, ինչքան ծաղիկներ եմ բերել:

Այս ասելով՝ Հայդին բացեց գողնոցը. բայց որքան տիսրեց, երբ տեսաւ որ ծաղիկները բոլորո-

վեն թառամել էին, էլ ոչ մի թերթիկ չէր մնացել:

— Ախ, պապի, այս ի՞նչ է դառել, վախեցած աղաղակեց Հայդին:

— Աւելի ախորժելի էր նրանց արևել տակ ծաղկել, քան թէ քո գողնոցում լինել, այդ պատճառով թառամել են. բացատրեց պապը: Այժմ գու գնա լողացիր, իսկ ես կաթ բերեմ, որ ընթրենք:

Երբ նրանք ընթրիքի նստան՝ Հայդին յանկարծ հարցրեց.

— Պապի, ինչո՞ւ այն մեծ թռչունն այնպէս բղաւում էր:

— Նա ծիծաղում է մարդկանց վրայ, որոնք գիւղերում ապրելով՝ միշտ կռւում ու վիրաւորում են իրար և բարձրից կանչում է.

«Ամօթ ձեղ»:

— Իսկ ինչո՞ւ այն սարերն անուն չունին:

— Ինչպէս չունին, նկարագրիր՝ գննէ միսար, և ես կասեմ թէ նա ինչպէս է կոչւում:

Հայդին նկարագրեց մի ժայռոտ սար երկու գաղաթով, իսկ պապն ասաց.

— Նա կոչւում է «Բաղէի բուն», էլի ի՞նչ տեսակ սարեր տեսար:

Հայդին մի սարի մասին էլ պատմեց, թէ  
գագաթի վրայ ձիւնապատ մեծ հովիտ ունէր.  
Երեկոյեան նա ամբողջովին կրակի մէջն էր,  
յետոյ վարդագոյն դառաւ, իսկ վերջը հանդաւ:

— Կընշանակէ, դու լաւ ժամանակ անց  
կացրիր արօտում, հաւանեցիր:

— Ո՛հ, այս, պապի, բացագանչեց Հայդին  
և պատմեց թէ ինչպէս լաւ էր, երբ փայլում  
էին սարերի ձիւները և ամբողջ երկինքը:

Պապը բացատրեց թէ ինչու արևի մայր  
մտնելիս՝ սարերն ու երկինքը փայլում են:

— Երբ արեգակը բարի գիշեր է մաղթում  
սարերին, ասաց պապը, նա ուղարկում է նրանց  
ամենալաւ ճառագայթները, որ մինչև առաւօտ  
նրան չմոռանան:

Այս բացատրութիւնը Հայդին շատ հա-  
ւանեց և տեսնելու սաստիկ ցանկութիւն դդաց,  
թէ ինչպէս առաւօտը արևը ծագելիս՝ կողջու-  
նէ սարերին: Նա գնաց քնելու և շուտով ա-  
մենաքաղցր քունք մտաւ: Երազում նա տեսաւ  
փայլոն սարեր, կանաչագարդ դաշտեր, կարմիր  
վարդեր, գոյնդոյն ծաղիկներ, իսկ նրանց մէջ  
թռչութիւն Զիւնիկը:

Miray.

Դ.

## ՏԾՏԻ ՄՈՏ



Իւս օրը, վաղ առաւօտեան, Պետքուն  
արօտատեղ գնալիս՝ անց կացաւ քեռու խրձթի  
առջևից՝ նրա այծերն ու Հայդիին էլ հետը տա-  
նելու:

Այսպէս անցնում էին օրերը. Հայդին ա-  
րեւից սեացել, թշերը վարդագոյն էին դառել  
և ինչպէս անհոգ թռչնակ՝ գոհ էր իւր ազատ  
կեանքից: Աշունն եկաւ և քամին աւելի յա-  
ճախ ու բարձրաձայն սկսեց ոռնալ: Մի այդ-  
պիսի առաւօտ պապն ասաց Հայդիին.

— Այսօր սաստիկ քամի է, դու կըմնաս  
տանը:

Պետքուն շատ էլ դուք չեկաւ այս լուրը.  
Հայդիի հետ ուրախ էր լինում, այծերն էլ սո-  
վորել էին նրա ձայնին, և սիրով մօտ էին վա-  
զում, երբ նա կանչում էր. բայի դրանից Հայ-  
դին իւր հացի մնացորդը միշտ տալիս էր Պետ-  
քուն. ուրեմն նա այս բոլորից զրկուելու էր:

Բայց չայդին ամենելին չտիրեց. նա ամեն բանով հետաքրքրւում էր և զբագւում. նա իսկի չէր ձանձրանում և ժամերով նայում էր, թէ ինչպէս էր պապը պանիր պատրաստում:

Ցրտելն ընկան: Ալմը ամբողջովին և նրա շրջակայքը ձիւնով ծածկուեցան. Պետրոսն այլ ևս չերեաց. այծերը օր ու գիշեր իրանց քողերումն էին անց կացնում:

Մի անդամ երբ պապն ու չայդին նստած էին հնոցի մօտ, դրսից յանկալծ ոտի ձախն լըսեցին. դուռը բացուեց և ներս մտաւ Պետրոսը:

— Բարի երեկոյ ձեզ, ասաց նա ուրախ ժպիտով և մօտեցաւ կրակին:

Վրայի ձիւնը հալւում և կաթկթում էր նրա շորերից:

— Հը, այծերի զօրապետ, ի՞նչպէս ես: Այժմ էլ զօրք չունիս և քարեղբիչ ես ծծում:

— Ինչու է ծծում քարեղբիչը, հետաքրքրութեամբ հարցրեց չայդին:

— Զմեռը սա դպրոց է գնում, որտեղ սովորեցնում են կարգալ զրել, և որովհետև սրա համար շատ դժուար է սովորելը, ստիպուած է լինում միայն քարեղբիչը ծծել. այնպէս չէ, զօրապիտ:

— Այո, այո, ճիշտ է, հաստատեց Պետրոսը:

Մինչդեռ պապը ընթրիքի պատրաստութիւն էր տեսնում, չայդին հարց ու փորձ էր անում Պետրոսին դպրոցի մասին, թէ ինչ բան է դպրոցը և թէ ինչ են անում այստեղ: Աերջապէս նրանք ընթրիքի նստան: Վազուց էր Պետրոսը մսի համ չէր տեսնել և ալժմ մեծ ախորժակով ուտում էր խաշած միսը:

Մուժն արդէն ընկել էր, երբ ընթրիքը վերջացըլին:

Պետրոսը նրանց բարի գլշեր մաղթելով՝ ասաց.

— Կիրակի օրը ես դարձեալ կըդամ, դու էլ եկ տատի մօտ, չայդի, նա քեզ կանչում է:

Այնուհետև չայդին ամեն օր լիշեցնում էր պապին տատի մօտ գնալու մասին: Վերջապէս մի օր քեռին վաթաթում է չայդին մի շորում, դիրկն առնում նրան, սահնակի վրայ նստում և սկանում են գէպի ներքե, երկրորդ Ալմը, որտեղ ապրում էին չայդիի տատը (մօր մարդը) եւը հարսի և թոռան Պետրոսի հետ:

Քերին լւը սահնակը կանգնեցրեց հէնց

Պետրոսենց խրճիթի առաջ և աղջկան դռան  
մօտ վայր իջեցնելով՝ ասաց.

— Մտիր տատի մօտ, իսկ ես երեկոյեան  
կըգամ քեզ տանելու:

Հայդին բաց արեց դուռը և ներս մտաւ.  
Դա մի փոքրիկ մութ սենեակ էր, որտեղ սեղա-  
նի մօտ նստած մի կին Պետրոսի շորն էր կար-  
կատում, իսկ կորացած պառաւը անկիւնում  
նստած թել էր մանում: Հայդին մտածեց, որ  
դա կըլինի տատը, մօտեցաւ նրան ու ասաց.

— Ահա և ես. բարեւ ձեզ, տատի, դու ի՞նձ  
սպասում էիր:

— Այդ դժւ ես, Հայդի, դժւ ես ապրույ  
վերեւ Ալմի վրայ, քեռու մօտ:

— Այս, այս, և հէնց այժմ էլ պապը բե-  
րեց ինձ սահնակով:

— Միթէ, բայց լինչպէս տաք են ձեռներդ՝

— Այդ նրանից է, որ պապս լաւ փաթա-  
թեց շորում և այնպէս բերեց:

— Մարգարիտ, դարձաւ պառաւը իւր հար-  
սին, ասա ինձ, ում նման է Հայդին:

— Կազմուածքով նման է մօրը, իսկ ու  
մազերն ու աչքերը աւելի հօրն են նմանում:

Հայդին մի լոպէում աչքի անցրեց սե-  
նեակը և պառաւին դառնալով ասաց.

— Նայիր, տատի, ինչպէս է խփում լու-  
սամուտի դռնակը. եթէ պապն այստեղ լինէր,  
իսկոյն կամրացնէր մեխով:

— Ախ, սիրելի աղջիկս, պատասխանեց  
տատը տիսբութեամբ, ես բան չեմ տեսնում,  
միայն լսում եմ, թէ լինչպէս, երբ դուրսը քա-  
մի է լինում, ամբողջ խրճիթը շարժւում և  
շառաչում է. իսկ գիշերները սարսափով եմ  
անց կացնում, թէ ահա խրճիթը կըքանդուի  
և ամենքս տակը կըմնանք:

— Ի՞նչպէս, տատի, ապա չես տեսնում  
լուսամուտի դռնակը, նայիր այստեղ:

— Ախ, սիրելիս, ես ոչինչ չեմ տեսնում,  
հառաչելով կրկնեց պառաւը:

— Իսկ եթէ բաց անեմ լուսամուտը, այն  
ժամանակ կըտեսնես, տատի:

— Քարձեալ չեմ տեսնի. ես կոյր եմ, եր-  
բէք ոչինչ չեմ տեսնելու:

— Բայց եթէ դուրս գաս, կըտեսնես սպի-  
տակ ձիւնը, այնպէս չեմ գնանք, տատի, ես  
քեզ ցոյց կըտամ:

Եւ նա թեկից բռնեց, որ վեր կացնէ:

— Թող ինձ, գառնուկս, ես չեմ կարող տեսնել ոչ սպիտակ ձիւնը և ոչ սպայժառ երկինքը:

— Ուրեմն ամառը, տատի, երեխ անպատճառ կրտեսնես, թէ ինչպէս պայծառ արել իւր տաք ճառագայթները սփռում է ամեն տեղ և թէ ինչպէս բոլոր սարերը փայլում են արևի լուսով:

— Հասկացի՞ր, հագեակս, որ ես կոյր եմ, որ չեմ տեսնում ոչ արեւ, ոչ լուսին և ոչ փայլող սարեր. ամեն ժամանակ մոռթն է ինձ համար այնպէս, ինչպէս քեզ կէս զիշերը:

Հայդին սկսեց դառնապէս լալ:

— Միթէ քեզ ոչոք չէ կարող օգնել, տատի. միթէ չեն կարող այնպէս անել, որ դու կարողանաս տեսնել:

Պառաւը սկսեց Հայդին մխիթարել.

— Իմ բարեսիրտ Հայդի, ասում էր նա, թէ ես չեմ տեսնում, բայց լաւ լսում եմ, ուրեմն մօտս նստիր և պատմիր թէ ինչպէս ես ապրում քեռու մօտ:

Հայդին մանրամագութեամբ պատմեց իւր

կեանքը քեռու մօտ: Պառաւը մեծ ուշադրութեամբ լսում էր: Յանկարծ դուռը բացուեց և ներս եկաւ Պետրոսը, Հայդիին տեսնելով՝ նրա դէմքը փայլեց ուրախութիւնից:

— Պետրոս, այդ դռւ ես, աղաղակեց պառաւը, ինչ շուտ եկար դպրոցից, ինչպէս անսկատելի կերպով օրն անցաւ: Դէհ, ինչպէս է ուսմանդ դործը:

— Դարձեալ նոյնն է, պատսախանեց Պետրոսը:

— Է՛հ, հառաջելով ասաց տատը, իսկ ես լոյս ունէի, որ երբ տասներկու տարեկան դառնաս, գործդ լաջող կերթայ:

Հայդին հետաքրքրուեց, թէ այդ ինչ գործէր, որից տատը ինչոր լոյս ունէր: Պառաւը նրան բացատրեց, թէ լնքը սաւտիկ ցանկանում է, որ Պետրոսը կարդալ սովորի և կարողանալ երեկոները կարդալ նրա համար աղօթագիրքը:

Խրճթում արդէն մոռթն էր. Պետրոսի մայրը ճրագ վառեց, իսկ Հայդին իսկոյն գնալու պատրաստուեց:

— Սպասիր, Հայդի, մենակ չգնաս, Պետրոսը քեզ ճանապարհ կըդցէ:

Բայց Հայդին այլ եւս չէր լսում, նա սես նեակից դուրս զալով՝ հեռւում նկատեց, որ պապը գալիս էր նրան տանելու և առաջ վազեց։ Պապը փաթաթեց նրան իւր հետ բերած հաստ շորում, դիրին առաւ և էլի սահնակով տուն տարաւ։

Խրճիթը մտնելուն պէտք Հայդին ասաց.

— Պապի, վաղը չմոռանանք, որ մեխեր և մուրճ վերցնենք հետներս. շատ մեխեր պիտի տանենք, որ թէ լուսամուտի դրնակը և թէ խրճիթի միքանի տեղերը պէտք է ամրացնել. տատը երկիւղից չէ կարողանում քնել։

Քեռին կատարեց իւր թոռնիկի խնդիրը և միւս օրը գնացին ըոլոր պատրաստութիւններով։

Հայդին դուռը բացեց և ներս ընկաւ խըրճիթը։ Պառաւը ճանաչեց նրա ոտի ձայնը, ձեռի իլիկը մի կողմը դրեց և երկու ձեռն էլ մեկնեց Հայդիին։ Հայդին մօտեցաւ, նստեց նրա կողքին և սկսեց ուրախուրախ խօսել. մէկ էլ յանկարծական մի սաստիկ հարուած լսուեց դրոից։ Պառաւը սաստիկ վախեցաւ։

— Տէր Աստուած, ասաց նա, տունը քանդում է զլխներիս։

— Բէք, տանի, մի՛ վախիր, դարկողը պապն էր, նա մեխերով պիտի ամրացնէ ըոլոր վնասուած տեղերը։

— Ի՞նչպէս, մի՛թէ, ուրեմն Աստուած բորովին չէ մոռացել մեղ և օդնող ձեռք է ուղարկել։ Պարզաբնութիւնը նա հարսին, գնացել է գեռուն խնդրիր որ ներս մտնի, ուզում եմ նըրան շնորհակալութիւն անել։

Պարզաբնութը դուրս եկաւ և տեսնելով որ ձերունին մուրճը ձեռին կանգնած է սանդուխքի վրայ՝ ասաց.

— Բարի օր, քեռի, ես ու մայրս շնորհակալութիւն ենք յախոնում ձեր արած լաւութեան համար և խնդրում ենք, որ ներս մտնէք։

— Ճնորհակալութեան ոչինչ չկայ, ընդմիշեց քեռին. դուք ներս մտէք. ինչ որ շինելու է՝ ինքս կրշինեմ։

Պարզաբնութ ներս մտաւ։

Քեռին մի փոքր սանդուխքի օդնութեամբ ամեն տեղ հասնում էր և ամրացնում, մինչեւ անգամ կտուրն էլ բարձրացաւ և այստեղ էլ ինչ որ շինելու էր՝ շինեց։

Այսպիսով նա մինչեւ մութը աշխատեց։

իսկ երբ կտուրից իջաւ, տեսաւ որ չայդին նոր դուրս է եկել խրճիթից և դէս ու դէն նայելով նրան է որոնում: Պապը դարձեալ փաթաթեց նրան շորով և դրկած տուն տարաւ:

Ճեռն անցաւ: Պառաւ տատի համար օրերն այնպէս միանման ու ձանձրալի չէին անց կենում, ինչպէս առաջ: Այժմ նա ուրախանում և միխթարւում էր չայդիի այցելութիւններով: Այնպէս էին սովորել երեխալի ներկայութեանը և սիրում նրան, որ եթէ պատահում էր, որ վատ եղանակի պատճառով պապը չէր տանում, այդ օրը սաստիկ տխուր էին անց կացնում: Հայդին էլ շատ սիրեց տատին. նրան միայն մի բան էր վշտացնում, երբ համոզուեց, որ նրա աչքերին լոյս տալ չի լինի: Տատը հանգստացնում էր նրան ասելով, թէ ինքը արդէն սովոր է և կարողանում է հաշտուել իւր դրութեան հետ:

Ե.

## ԱՅՅԵԼՈՒՆԵՐԸ ՆԵՂԵՑՆՈՒՄ ԵՆ ՊԱՊԻՆ

 ուտով անցաւ ճեռը և աւելի շուտ՝ ուրախ ամառը. ահա երկրորդ ճեռն էլ վերջանալու վրայ էր: Փարնան արեւ վոքը ինչ տաքացրեց երկիրը. եղենիները աղատուելով ձիւնի և սառուցի ծանրութիւնից՝ ուրախ-ուրախ ուղղեցին իրանց ճիւղերը դէպի արեւի ճառագայթները: Հայդին հըճուանքով վազվզում էր. խրճիթից քող մտնում, այնտեղից կրկին պապի մօտ և յայտնում էր նրան, որ հողի վրայ շատ շատ կանաչ խոտ է երեւացել և շուտով ամբողջ Ալմը կըծածկուի ծաղիկներով:

Փարնան մի պայծառ օր էր: Հայդին խաղում էր ալծերի հետ: Այդ միջոցին մի քահանայ եկաւ և ուղղակի խրճիթը մտաւ քիուռ մօտ: Գերունին նրան յարգանքով ընդունեց և հրաւիրեց նտոելու:

— Երեւի դուշակում էք իմ դալու պատ-

ճառը, խօսեց քահանան: Զեր թոռը հիմա այն հասակումն է, որ ժամանակ է նրան ուսումնարան տալու: Ուսուցիչը մի քանի անդամ լիշեց- րեց ձեզ այդ բանի մասին, իսկ դուք պատաս- խան էլ չտուիք:

— Նա չպիտի գնայ ուսումնարան, պա- տասխանեց քեռին:

·Քահանան զարմացած նայեց ծերունու վը- րայ ու հարցրեց.

— Ի՞նչ կարող է դառնալ ձեր երեխան:

— Առանձին ոչինչ: Նա մեծանում է այ- ժերի ու թռչունների հետ, որոնցից ոչ մի վատ բան չի կարող սովորել:

— Բայց նա այծ չէ, այլ մարդ է. Եթէ, ինչպէս ասում էք, նրանցից վատ բան չի կա- րող սովորել, որեւէ լաւ բան էլ չի սովորի: Ինք- ներդ էլ լաւ ծտածեցէք: Քանի ուշ չէ, հար- կաւոր է սկսել ուսումը: Այս թող վերջինը լի- պիտի յաճախէ: Դպրոց:

— Նա չպիտի գնայ դպրոց, կրկնեց քեռին:

— Միթէ ես չպիտի կարողանամ ձեզ հա- մոզել, զարմացած դոչեց քահանան: Զէ որ դուք

շատ տեղեր էք ման եկել, շափ բան տեսել և սովորել: Ես ձեր մասին այն կարծիքի եմ, որ դուք մի խելացի մարդ էք:

— Եւ դուք կարծում էք, որ ես ձմեռուայ ցրտին ու փոթորկին կրհամաձայնուեմ երեխա- լին ուղարկել Դերֆլի, լուղուած խօսեց ծերու- նին, մանաւանդ այսպիսի քնքոյշ երեխալին, ինչպէս Հայդին է: Եթէ ինձ կըստիպին այդ անել, ես կերթամ բոլոր դատարանները և տես- նենք, թէ ինչպէս ինձ ինձ ստիպում:

— Ճիշտ էք ասում, բարեկամ, ասաց քա- հանան մեղմ կերպով: Պարզ է՝ որ այստեղից երեխան չի կարող ման գալ: Ինչպէս տեսնում եմ՝ դուք սիրում էք այդ երեխալին. ուրեմն նը- րա սիրոյ համար տեղափոխուեցէք ներքեւ, Դերֆ- լի և այստեղ ապրեցէք:

— Ես չեմ կարող այնտեղ տեղափոխուել. սովոր եմ միայնակ կեանքի և այսպէս էլ կը- շարունակեմ:

— Տէր ընդ ձեզ, տիսրութեամբ ասաց քա- հանան և ծեռունուն ձեռը սեղմելով՝ դուքս եկաւ խրճթից:

Քեռին ամբողջ օրը չխօսեց: Աաշից յետով  
Հայդին հարցրեց.

— Այսօր կերթանք տատի մօս:

— Ո՞չ, պատասխանեց պապը:

Հայդին միւս օրն էլ կըկնեց իւր հարցը և  
նոյն պատասխանն ստացաւ:

Հազիւ նրանք ճաշի էին նատել, եթք յան-  
կարծ դռուք բացուեց և ներս մտաւ Նունէն  
(Հայդիի մօրաքոյլը): Նա բաւական լաւ էր  
հագնուած և զլիսին էլ մեծ գլխարկ էր դրել  
փետուրներով: Նա սկզբում Հայդիին ոկսեց գո-  
վել ասելով՝ որ նա այսպէս լաւացել, առող-  
ջացել է. յատոյ յախնեց, որ Հայդին մի մեծ  
բախտաւորութեան մէջ է ընկնելու:

— Լսեցէք թէ ինչպէս, քեռի. — Ֆրանկ-  
ֆուրտում կայ մի շատ հարուստ ընտանիք, որը  
տիկնոջ աղդական է. նրանք մի հիւանդ-  
աղջիկ ունին, որի համար ուղում են մի ընկե-  
րուհի, և այսպիսի աղջիկ են որոնում, որ  
ուրիշ երեխաների նման չինի, լաւ վարք ու  
բարքով լինի: Ես իսկոյն մտաբերեցի Հայդիին  
և բանը ձեռաց սարքեցի: Նրան ամեն բան  
կըսովորեցնէն, լաւ լաւ ընծաներ կըտան...

— Դու վերջացրիր, ընդհատեց քեռին:

— Ըիս, ի՞նչ տեսակ մարդ էք, ասաց Նու-  
նէն, ձեր տեղը ամեն մէկը կուրախանար այս  
բախտաւորութեան համար...

— Ով ուզում է՝ ուրախանալ, իսկ ինձ  
հանդիստ թող, ասաց ձերը:

Այն ժամանակ Նունէն էլ քաղաքավարու-  
թիւնը մի կողմ թողած՝ զոչեց.

— Եթէ այդպէս է, ես կատեմ այն, ինչ  
որ ճշմարիտ է: Հայդին հիմա ութը տարե-  
կան է և գեւ ոչինչ չի սովորել. ինչպէս ինձ  
Թերֆլում ասացին, գուք չէք կամենում նրան  
գլուց ուղարկել: Նա իմ քրոջ աղջիկն է, և  
ես պէտք է հօգոս քաշեմ նրա մասին: Նա  
պէտք է օգուտ քաղէ այն գէպքից, որ տալիս  
է նրան իւր բախտը:

Դերունու աչքերը փայտում էին կատաղու-  
թիւնից:

— Վերցրու, տար, բղաւեց նա, և էլ աչ-  
քիս չերևաք: Ինձ անտանելի կըկնի նրան  
տեսնել այդպիսի զուքսերով, փետուրներով և  
քեղ նման երկար լեզուով:

Այս ասելով քեռին դուրս եկաւ խրճթից:

— Դու բարկացրիր պապին, ասաց Հայդին:  
— Բան չկայ, նա կըհաշտուի, գնանք շուտ,  
ոլտեղ է շորերդ:

— Ես չեմ գայ, ասաց Հայդին:

— Ի՞նչպէս, բղաւեց Նունէն, բայց շուտով  
ձայնը մեղմացրեց ասելով՝ գնանք, հոդիս, գը-  
նանք, հաւատած ինձ, որ այնտեղ աւելի լաւ  
կըլինի քեզ համար:

Յետոյ նա պահարանը բաց արեց, Հայդին  
շորերը հանեց ու կապեց:

— Դէհ, ծածկի՞ր գլխարկդ, գնանք:

— Չեմ ուզում գալ, կրկնեց Հայդին:

— Կամակորութիւն մի՛ անիր, զսեցի՞ր, ոլ  
ապալը թոյլ տուեց ինձ քեզ տանելու. ուզում  
եւ նրան բարկացնէլ: Դու զգիտես թէ ինչպէս  
լու է Փրանկֆուրտում. իսկ եթէ չես հաւանի,  
կարող ես էլլի ետ գալ:

— Կարող եմ հէնց այսօր երեկոյեան վե-  
րադառնալ, հարցրեց Հայդին:

— Ի հարկէ, երբ ուզենաս՝ կարող ես վե-  
րադառնալ:

Նունէն վերցրեց կապոցը և Հայդին ձե-  
ռիցը բռնելով՝ ուզեւրուեց դէպի ներքեւ, գլւղը:

Երբ Պետրոսենց խրճթի մօտով անց էին  
կենում, Հայդին շատ խնդրեց, որ թոյլ տաէ  
իրան տատի հետ տեսնուելու:

Նունէն չժողովեց, նա միայն շտապեց-  
նում էր:

— Հիմա ինչու ես մտնու՞մ. այնեղից վե-  
րադառնալիս ընծաներ կունենաս տատիդ հա-  
մար, կըմտնես և ընծաներով կուբախացնես:

Հայդին հաւանեց այս խորհրդին:

— Ի՞նչ բերեմ այնտեղից տատի համար,  
հարցրեց նա մի փոքր լուռթիւնից յետոյ:

— Որևէ լաւ բան, ասաց Նունէն, օրինակ՝  
սպիտակ հաց. չէ՞ որ նա դժուարութեամբ է  
ուտում ուեւ, չոր հաց:

— Այս, դժուարութկամբ է ուտում. շուտ  
գնանք, մօրաքոյր, որ ես հէնց վաղը վերա-  
դառնամ և բուլկի բերեմ տատիս համար:

Եւ նա այնպէս արագացրեց իւր քաղերը,  
որ Նունէն կապոցը ձեռին հաղիւ կարողանում  
էր նրան հետևել:

Այն օրից քեռին աւելի ես տխրեց. նա  
սովորաբար գնում էր Գերֆլի գլւղը, պանիր  
ծախում և իւր համար հաց ու միս առնում.

ծանօթներին պատահելիս՝ ոչ խօսում էր հետ-  
ները, ոչ բարեռում։ Տայտը նոյնպէս զրկուեց իւր  
միակ ուրախութիւնից. նա շարունակ մտաբե-  
րում էր չայդիին և հառաջելով ասում. «Ա'ս,  
երանի թէ մեռնելուցո առաջ մէկ անգամ ել  
տեսնէի իմ սիրելի չայդիին»։



Զ.

ՆՈՐ ԳԼՈՒԽ ԵԻ ՆՈՐ ԿԵՎՆՔ



բանկֆուլուում, հարուստ ջեղեմանի  
տանը շարժական յարմար բազկաթուի վրայ նըս-  
տած էր տանտիրոջ հիւանդ աղջիկը, կլարան։  
Այդ բազկաթուի վրայ նա անց էր կացնում  
ամբողջ օրեր և նրանով էլ ման էին ածում  
սենեակից սենեակ։ Նա նստած էր սեղանատան  
կից սենեակում, որ դարդարուած էր զրքերի  
զեղեցիկ պահարաններով և ոյսեղ ուսուցիչը  
ամեն օր պարապում էր նրա հետ։ Այսօր նրա  
մեծ ու կապոյտ աչքերով նիշար դէմքը ան-  
համբերութիւն էր արտայալում։ Նա ամեն  
լոռի նալում էր պատի մեծ ժամացոյցին, որի  
պաքները այս անգամ, նրա կարծիքով, դան-  
գաղ էին շարժւում։

— Նրանք երբ պիտի դան, օրիորդ Նա-  
տալիա, հարցրեց նա իւր գաստիարակչուհուն,  
որ փոքրիկ սեղանի մօտ նստած կարում էր։

Տան տիկնոց մահից յետոյ պ. Զեղեսմանը նրան էր յանձնել թէ տան կառավարութիւնը և թէ աղջկալ դաստիարակութիւնը:

Այդ ժամանակ Նունէն Հայդիի հետ միասին կանգնած էր նրանց դռանը և զանդակն էր տալիս:

Աղախինը դուրս եկաւ ու հարցրեց.

— Ի՞նչ էք կամենում:

— Կարելի է օրիորդ Նատալիային տեսնել՝ հարցրեց Նունէն:

Աղախինն անլաբտացաւ. միքանի բոպէից յետոյ դարձեալ երևաց ու ասաց.

— Կարող էք բարձրանող:

Նունէն Հայդիի ձեռիցը բռնած՝ մտաւ օր Նատալիայի մօտ: Հայդիի արտաքինն օրիորդին դուր չեկաւ:

— Անունդ ի՞նչ է, հարցրեց նա աղջկան:

— Հայդի, եղաւ պատասխանը:

— Ի՞նչպէս, այդ քրիստոնեայի անուն չէ, ասա, մկրտուելիս քեզ ի՞նչ անուն են դրել:

— Ես ուրիշ անուն չգիտեմ, ընդդիմախոսեց Հայդին:

— Ահա քեզ պատասխան, նկատեց օրիորդի՝ Նունէ, այս աղջկիկը լիմար է թէ յանդուդն:

— Ներեցէք խնդրեմ. աղջիկը դեռ ևս անփորձ է, ասաց Նունէն Հայդիին բոթելով, սա ոչ լիմար է, ոչ յանդուդն, միայն խօսում է այն, ինչ որ մտածում է: Մկրտութեան անունն է Աղելհայդ, այդպէս էր կոչւում և իւր մարը, իմ հանգուցեալ քոյրը:

— Դէհ, փառք Աստծուն, «Աղելհայդ» կարելի է արտասանել: Բայց լսիր, Նունէ, Կլարայի ընկերուհին տարիքով էլ պիտի յարմարուի նրան, որովհետեւ նրանք միասին են պարապելու: Կլարան ալժմ տասն երկու տարեկան է, իսկ ձեր քրոջ աղջիկը քանի տարեկան է:

— Ներեցէք, օրիորդ, այդ ես չմտածեցի, սա մօտ տասը տարեկան է:

— Ես ութը տարեկան եմ, պապս ինձ ասաց, յայտնեց Հայդին:

Նունէն դարձեալ բոթեց նրան: Հայդին չէր հասկանում, թէ ինչո՞ւ են խփում նրան և համարձակ կանգնած էր:

— Ի՞նչպէս, նա միայն ութը տարեկան է, գոչեց օրիորդը, միթէ կարելի է: Դէհ, ի՞նչ ես առվորել, ի՞նչ գրքեր ես կարգացել:

— Ոչի՞նչ:

— Դու բոլորովին զղխես կարդալ:  
— Ես զղխեմ կարդալ, Պետրոսը նոյնպէս  
չդիտէ:

— Նունէ, չէ որ քեզ յայտնի էր մեր պա-  
հանջները, ինչու սրան բերիր մեղ մօտ:

— Ներեցէք ինդրեմ, խանում, դուք ինձ  
գրել էլք, թէ ցանկանում էք այնպիսի երեխան  
որ ծիւտների նման ըլինի, ես էլ բերի հայդիին.  
շուտով դուք ինքնելոդ կըհամոզուէք, որ սա մի  
ուրիշ տեսակ երեխայ է: Խոկ այժմ թող տուէք  
ինձ դնալու, որովհետև տիկինս սպասում կը-  
լինի. ուրիշ անդամ կըզամ իմանալու, թէ ինչ  
պէս էք հաւանել երեխալին: Այս ասելով նու-  
նէն շտապով դուրս եկաւ սենեակից:

Օրիորդը շփոթուած դուբս եկաւ և մտաւ  
սեղանատուն կարգադրութիւններ անելու:

Կարան հայդիի հետ միայնակ մնալով՝  
կանչեց նրան իւր մօտ:

— Ի՞նչ անուն տամ քեզ՝ հայդի թէ Ագել-  
հայդ:

— Ամենքն ինձ հայդի են ասում:

— Ուրեմն ես էլ հայդի կասեմ. ես շատ  
եմ հաւանում այդ անունը, թէև առաջին ան-

դամ եմ լուսմ: Դու ինքդ էլ ուրիշ երեխաների  
նման չես: Դու ուրախ ես, որ եկար Փրանկ-  
Գուրտ:

— Ո՛չ. վաղը ես կերթամ այստեղից և  
տատիս համար սպիտակ բուլկի կրտանեմ:

— Ի՞նչ տարօրինակ ես, միթէ զղխես,  
որ քեզ բերել են ինձ համար: Ինձ մենակ սո-  
վորելը տիրալի էր, խոկ քեզ հետ ուրախ կըլի-  
նիմ. կընայեմ թէ դու ինչպէս ես սովորում  
կարդալ: Հայդին մտածկրտ՝ զլուխը թափ տուեց:

— Թէհ, Հայդի, յայտնի բան է, որ պէտք  
է սովորես կարդալ, ամենքն էլ զղխեն կարդալ:

Այդ ժամանակ գոռը բացուեց, ներս  
մտաւ Աերաստեան – ծառան և Կլարային իւր  
բազկաթուով քաշեց տարաւ սեղանատուն: Հայ-  
դին էլ կանչեցին և օրիորդը ցոյց տուեց նը-  
րան դիմացի աթոռը, որ նստի վրան: Հայդիի  
ամանի մօտ դրած էր մի կտոր սպիտակ հաց,  
որի համար նա շատ ուրսխացաւ: Ճաշի ժա-  
մանակ Հայդին միքանի անգամ դիմեց Աերա-  
ստեանին զանազան հարցեր տալով և ուրիշ սը-  
խալներ էլ արաւ, որի համար նկատողութիւն  
ստացաւ օրիորդից, խոկ ծառալի հետ խօսելը

խստիւ արգելուեց նրան, մանաւանդ դու-ով  
խօսելը: Այսպէս օրիորդը երկար ժամանակ խօ-  
սում էր նրա հետ, զանազան կարգ ու կանոն-  
ներ սովորեցնում. իսկ չայդին, որ առաւոտը  
ժամը 5-ին էր վեր կացել և ճանապարհի մի  
մասը ոտով անցել, նստած տեղում քնեց:

Օրիորդը երբ վերջացրեց իւր խրատները,  
հարցրեց.

— Ագելհայդ, լաւ հասկացար ասածս, միտդ  
կըպահես այս բոլորը:

— Հայդին վաղուց քնել է, ծիծաղելով նը-  
կատեց կարան:

— Այս ի՞նչ անտանելի երեխայ է, գոռաց  
օրիորդը և այնպէս ուժով տուեց զանդակը, որ  
թէ ծառան և թէ աղախինը ներս եկան:

Աղախինն օրիորդի հրամանով վերցրեց չայ-  
դին և գրկած տարաւ նրա համար պատրաս-  
տած սենեակը քնացնելու:

Ե.

## ՕՐ. ՆԱՏԱԼԻԱՆ ԱՆՀԱՆԴԻՍ Է

 այդին առաւոտեան դարթելով՝ գտաւ  
իրան սպիտակ մաշճակալի մէջ, դարդարուած,  
մեծ սենեակում: Կա սկզբում կարծեց թէ երա-  
զի մէջ է, բայց շուտով ուշքի եկաւ և մտա-  
բերեց նախընթաց օրուայ եղելութիւնը: Ճտա-  
պով հագնուեց, լուացուեց և յետոյ սկսեց պա-  
տուհանից նայել. նա՝ ըստ իւր սովորութեան՝  
ուզում էր երկնքին նայել և թարմ օդ ծծել.  
բայց պատուհանները բարձր էին և չկարողա-  
ցաւ բայց անել: Հայդին տիսրեց: Կա պապի մօտ  
եղած ժամանակ ամեն առաւոտ տեսնում էր  
կապոյտ երկինք, կանաչ դաշտեր և հին եղեւ-  
նիներ. իսկ այս սենեակում նա զզաց երան  
փակուած, ինչպէս թռչնակը ուկեզօծ վան-  
դակում:

Հայդին տեսնելով որ ոչ մի կերպ չի կա-  
զող երկինք կամ երկիր տեսնել, սկսեց մտածել,

թէ ինչպէս անէ, որ աղատուի այստեղից և գնայ պապի մօտ, Ալմը: Եյդ ժամանակ աղաւինը բաց արեց դռութ և «Նախաճաշը պատրաստ է» ասելով՝ գնաց: Հայդին չհասկացաւ այս հրաւէրը. նա մի անկիւնում նստեց և սպասում էր թէ ինչ կըլինի:

Միքանի բոպէից յետոյ օր. Նատալիան ներս մտաւ ու բարկացած զոչեց.

—Ի՞նչ ես շինում այստեղ, Ագելհայդ, չիմացալ որ նախաճաշը պատրաստ է. Եկ շուտով:

Հայդին գնաց օրիորդի ետևից: Երբ նախաճաշը վերջացրին, օրիորդը առանձնացաւ, իսկ Հայդին մնաց Կլարայի մօտ և միասին սրպասում էին ուսուցչի գալուն:

Երեխաների մէջ շուտով խօսակցութիւն բացուեց:

—Ես սաստիկ ուզում եմ զետին տեսնել, ինչպէս անեմ, Կլարա, հարցրեց Հայդին:

—Բաց արա պատուհանը և կըտեսնես, պատասխանեց Կլարան:

—Բաց պատուհանը չի բացւում:

—Ի հարկէ դու չես կարող, խնդրիր Սեբաստեանին, նա բաց կանէ:

Հայդին քիչ մխիթարուեց, որ գոնէ պատուհանից կարող է զետին տեսնել: Այնուհետեւ Կլարան սկսեց իւր ընկերուհուն հարց ու փորձ անել նրա անցեալ կեանքի մասին, և Հայդին յափշտակուած պատմում էր իւր կեանքը Ալմի վրայ. պապը, այծերը, իրանց իրձիթը և բոլորը, բալորը լիշեց, ինչ որ նա սիրում էր սարի վրայ:

Այդ միջոցին ուսուցիչն եկաւ. և սկսեց նըրանց հետ պարապել:

Օրիորդը սեղանատանն էր, երբ երեխաների սենեակից՝ ինչ-որ աղմուկի ձայն լսեց. նա իսկոյն վաղեց այստեղ և ինչ տեսաւ. յատակի վրայ թափուած էին զրքեր, տեսրակներ, թանաքաման, իսկ սփռոցը թանաքով կեղտոտուած. Հայդին չկար սենեակում:

—Այս ինչ սարսափելի բան է, բզաւեց օրիորդը, ամեն բան վչացել է թանաքով. երբէք այսպիսի բան չի պատահել. ես համոզուած եմ, որ մեղաւորը Ագելհայդն է. որտեղ է նա:

—Հայդին պատահմամբ արաւ, խօսեց Կլարան, նրան չպէտք է պատժել. պատօհանի յօտով կառոք էր անցնում, նա վաղեց տեսնելու:

Հու և ամեն բան ներքեւ թափուեց: Երևի երբէք չի տեսել կառք:

— Նա ոչինչ էլ չի տեսել. բայց նա ո՞րտեղ է, տանից էլ չփախչի. այն ժամանակ ես ի՞նչ սլատասխան տամ պլ. Զեթմանին:

Օրիորդը դուրս վագեց և տեսաւ, որ չալդին նախասենեակի դուռը բաց է արել ու դէպի փողոյն է նախում:

— Դու այստեղ ի՞նչ ես շինում, բղաւեց նա, խելքիդ ո՞ր քամին է փշել, ի՞նչպէս համարձակուեցիր դասից փախչել:

— Ես լիցի եղենիների խշխոցը, բայց չգիտեմ ո՞րտեղ ես նրանք, էլ չեմ լսում նրանց ձայնը:

— Եղենիներ, ի՞նչեր ես հնարում, այստեղ անտառ հօ չէ, զնա և տես թէ ի՞նչ ես արել:

Երբ նրանք վերադարձան կարայի սենեակը, օրիորդը շարունակեց. «Տես որ այսպիսի բան միւս անդամ էլ չկրկնես, իմացած եղիր, որ դասի ժամանակ հանդիսա պէտք է նստել, իսկ եթէ ուրիշ անդամ էլ վաղվես, ես քեզ աթոռին կըկապեմ, հասկանում ես:

— Հասկանում եմ, ասաց չալդին, այսուհետև հանդիսա կընստեմ,

Աւսուցչի դնալուց յետոյ Սեբաստեանը մտաւ, սենեակը կարգի բերեց: Ճաշից յետոյ Կլարանքնեց իւր բազկալթոռի վրալ, օրիորդը գնաց իւր սենեակը, իսկ չալդին մենակ մնալով՝ տըխրեց. նա գուրս եկաւ նախասենեակը, որ գոնէ ծառաների հետ կարողանալ խօսել: Հէնց այդ ըոպէին Սեբաստեանը բարձրանում էր սանդուխքով: Հալդին խկոյն հարցրեց.

— Սեբաստեան, ասա ինձ, ի՞նչպէս են բայց ամ պատուհանները:

Դառան բաց արեց և պատուհանի մօտ աթոռ դնելով՝ օդնեց չալդին բարձրանալու:

— Այստեղից միայն փողոցն է երկում, զարմացած նկատեց չալդին, իսկ եթէ այստան միւս կողմը դնանք, այնտեղից ի՞նչ կըտեսնենք, Սեբաստեան:

— Դարձեալ փողոց, պատասխանեց նա:

— Ազա ո՞րտեղից կարելի է տեսնել քաղաքի բոլոր շրջակալքը:

— Երբ բարձրանաս այն զանգակատանը, որ ահա այստեղից երկում է փալուն, ոսկեզօծ խաչով, երևի այնտեղից կերեալ շրջակալքը: «Պիթէ», ուրախ աղաղակեց չալդին և

մի ակնթարթում աթոռից վայր թռաւ, իշաւ  
սանդուխտներից և դուրս եկաւ փողոցը. բայց  
ափսո՞ս, զանգակատունը այլ ես չէր երե-  
տում, այն ինչ պատուհանից նայելով՝ նրան  
թռում էր թէ հենց որ ինքը փողոց դուրս դայ,  
զանգակատունը նրա առաջը կը լինի: Նա ծը-  
ռուեց միւս փողոցը, բայց այնտեղից էլ չէր  
երեւում: Հայրին միքանի ըստէ կանդ առաւ,  
մտածում էր թէ ինչ անէ. վերջապէս նա դի-  
մեց նոյն փողոցով անցնող մի տղալին.

— Զգիտես, որտեղ է ոսկեղօծ խաչով զան-  
գակատունը:

— Զգիտեմ, պատասխանեց տղան:

— Բայց ումնից կարելի է իմանալ:

— Զգիտեմ:

— Դու իսկի զգիտես մի այնպիսի եկեղեցի,  
որ բարձր զանգակատուն տնենայ:

— Գիտեմ:

— Յոց տուր ինձ:

— Լաւ, ցոյց կը տամ, գնանք:

Նրանք երբ անց կացան մի երկար փո-  
ղոց, տղան կանդ առաւ մի մեծ դռան մօտ ու  
առաց.

— Ահա և ետղեցին:

Հայդին նկատեց զանգակը և ոկտեց քա-  
շել բոլոր ուժով: Խակ տղալին գիմելով՝ ասաց.

— Երբ ես վեր բարձրանամ, դու այստե-  
ղից չեռանաս, թէ չէ ես մենակ չեմ կարող  
ետ գնալ տուն:

Այդ ժամանակ դուրս եկաւ ծեր պահա-  
պանը և տեսնելով որ ելեխաներ են, բարկա-  
ցաւ ասելով.

— Ի՞նչպէս համարձակուեցիք զանգահարել.  
Է՞ք տեսնում, որ այստեղ զրուած է՝ «ով ու-  
զում է բարձրանալ զանգակատունը՝ այս զանգն  
է քաշում»:

— Ես ուզում եմ բարձրանալ զանգակա-  
տունը, ասաց Հայդին:

— Ի՞նչ պիտի անես այնտեղ, ով ուղար-  
կեց քեզ:

— Ինձ ոչոք չի ուղարկել, ես ինքս ուզում  
եմ այնտեղից ներքեւ նայել:

— Եւելի լաւ է տուն գնաս:

Այս ասելով պահապանն ուզում էր դուռը  
փակել, բայց աղջիկը այնպիսի խղճակի հայեաց-  
քով էր նայում և թողլուռթիւն ինգրում նը-

բանից, որ ծերունին կակղեց և ձեռվց բռնելով ասաց.

— Եթէ այդքափ ուզում ես, գնանք:

Երբ բարձրացան, պահապանը մօտեցրեց նրան բաց պատուհանին, որ նայէ:

Հայդին իւր առաջը տեսաւ միայն տանիքներ, աշտարակներ և ծխաններ: Իսկ սարերի ու կանաչ դաշտերի, որոնց այնպէս կարօտել էր, նշով անգամ չկար:

Հայդին երեսը դարձրեց ու ասաց.

— Այստեղից ոչ մի լաւ բան չի երեռում:

— Ի՞նչպէս թէ լաւ բան չի երեռում, դու ոչինչ չես հասկանում. դէհ, իջնենք և էլ երբէք չգաս այստեղ:

Երբ վայր իջան, Հայդին դռան մօտ նկատեց մի մեծ կողով, որի մէջ մի մոխրաղոյն կատու էր պառկած. մօտեցաւ որ ձեռ քով շոյէ, բայց մեծ եղաւ նրա զարմանքն ու ուրախութիւնը, երբ նրա մօտ տեսաւ և նրա ձագուկները:

— Ո՞հ, սիրելի ձագուկներ, աղաղակեց նա և սկսեց կողովի շուրջը թռչուել:

— Եթէ ուզում ես, մէկը քեզ կընծայեմ, ասաց պահապանը:

— Ի՞նձ, ընդ միշտ, հարցրեց Հայդին ըլդհատալով ալդպիսի բախտաւորութեան:

— Այն, հէնց քեզ, ընտրիր որին ուզում ես:

Հայդին անչափ ուրախ էր. նա ձեռը մեկնեց, թէ մէկին վերցնի, բայց մէծ կատուն այնպէս ֆշշաց, որ սողջիկը վախեցած յետ քաշեց ձեռը:

Սլդ ժամանակ պահապանը զզուշութեամբ վերցրեց կատուն, ներս տարաւ իւր սինեակը և նրան ուտելիք տալով դուռը փակեց:

Երբ նա վերագարձաւ, Հայդին, որ նայրւմ էր ձագուկներին ու հիանում, աղաչելով ասաց.

— Եթէ կարելի է երկուոր տռելք, մէկը ինձ, միւսը Կլարալին:

— Կարելի է, ընտրիր երկուսը:

— Հայդին աչիկները վազեցին ուրախութիւնից. նա լնտրեց սպիտակ ու գեղին ձագուկներ և գոդնոցի զրափանների մէջ դրեց նըրանց. յետոյ շնորհակալութիւն յայտնեց ծերունուն և դուրս եկաւ:

Տղան դեռ սպասում էր դռանը:

Նրանք երկուսն էլ շտապ քայլերով առաջ գնացին. տղան շտապում էր, որովհետեւ գործից

յետ էր ընկել, իսկ չայդին շտապում էր Կլա-  
րալին ուրախացնելու իւր ձագուկներով:

Ճռատով նրանք հասան Ձեզեմանի տռնլ՝  
չայդին զանգահարեց. դուրս եկաւ Սեբաստեա-  
նը և չայդին տեսնելով ասաց.

— Ճ՛ռտ արէք, չայդի, արդէն ճաշում են:

Չայդին մտաւ և նստեց սեղանի մօռ իւր  
տեղը:

— Աղելհայր, հանդիսաւոր կերպով սկսեց  
օր. Նատալիան, դու անօրինակելի վարք ես  
ունեցել. առանց հարցնելու, առանց մի խօսք  
անգամ ասելու մէկին՝ թողնում ես տունը. այդ  
պիսի անկրթութիւնն...

«Միառնու»... լսուեց լանկարծ.

— Աղելհայր, գոռաց օրիորդը, դու քեզ  
թող ես տալիս լիմար կատակներ անելու. ը՞  
դո՞շ կաց, ասում եմ քեզ:

«Միառնու» .. լսուեց կրկին:

— Բաւական է, դուրս գնա այստեղից:  
Չայդին վախեցած վեր կացաւ և ուզում  
էր պատմել պատճառը, բայց չկարողացաւ:

«Միառնու»-ի ձախը խանգարեց նրան խօ-  
սելու:

— Հայդի, վերջապէս խօսեց Կլարան, ինչո՞ւ  
ես մլաւում և օրիորդին բարկացնում ես:

— Այդ ես չեմ, կատուի ձագուկներն են,  
վերջապէս ասաց չայդին:

— Ի՞նչպէս, ձագուկնելլը, գոռաց օրիորդը.  
Սեբաստեան, դուք այդ սարսափելի կենդանի-  
ներին և դուրս ձգեցէք այստեղից:

Սեբաստեանը, որ առաջուց տեսել էր չայ-  
դի գրպաններում կատուի դնչիկները, նախա-  
սենեակում կանգնած՝ սպասում էր հետևան-  
քին: Աղմուկի ձայնը լսելով՝ մտաւ և տեսաւ  
որ օրիորդը արդէն միւս սենեակն էր փախել.  
Կլարան ձագուկներին նստեցրել էր իւր Ճնկ-  
ների վրայ և չայդին էլ իւր առջեզ կանգնած՝  
երկուսով փաղուքշում էին պատվիկ ձագուկ-  
ներին:

— Սեբաստեան, ասաց Կլարան, դուք մեզ  
պիտի օգնէք, մի տեղ գոտէք այս ձագուկների  
համար և լաւ պահեցէք. բայց որ դիսաւորն է՝  
օրիորդը չտեսնէ, նա սամնիկ վախենում է կա-  
տուից. իսկ երբ նա տանը չի լինի, մենք հետ-  
ները կըխաղանք:

— Միամիտ կացէք, ասաց Սեբաստեանը,

այս դրանց համար փափուկ անկողին կըշինեմ և այնպիսի տեղ կըպահեմ դրանց, որ օրիորդը երբէք չկարողանալ դառնել:

Օրիորդը շատ անհանգիստ էր չայդիի տարօրինակ վարմունքի համար: Այդ օրը նա մը տածմունքի մէջ ընկաւ, թէ ինչ միջոց գործ դնէ նրան ուղղելու: Միւս օրը, ճաշից յետոյ սկսեց լուրջ կերպով խօսել այդ մասին:

— Աղելհայդ, ես միայն մի պատիժ գլուխեմ, որ կարող է քեզ ուղղել: Քեզ վակելու եմ մութ ներքնատանը և յոյս ունիմ, որ այն տեղ մկների ու մողեսների հետ մնալուց յետոյ խելքի կըդաս և այնպիսի բաներ էլ չես անի:

Հայդին զարմանքով լսում էր իւր դատավճիռը. Ենչ կայ վախենալու ներքնատանը, ընդհակառակը, պապի մօտ ներքնատանը շատ էլ լաւ էր. այնտեղ էլն պահում և՛ պանիրը, և՛ իւղը, և՛ կաթը. իսկ մկներ և մողեսներ ամենևին չըկալին:

Կլարան արտասուալից աչքերով խնդրում էր օրիորդին սպասել իւր հայդիկի դալուն, որ նա մտածէ այդ մասին:

Օրիորդը շատ դժուկ էր չայդիի վարմունքից, նա համարեա լուսահատուած էր, թէ նրան երբեւցէ կարելի է ուղղել, բայց և այնպէս համաձայնուեց սպասել, որովհետեւ պ. Զեգեմանը ճիշտ որ գալու էր մօտ օրելում:

Կլարայի պարապմունքները առաջուալ նըսան տխուր չէին անցնում. Հայդին ծիծաղեցնում էր նրան իւր բացադանչութիւններով: Ուսուցչը սովորեցնում էր նբան ալբուբէն և դիտողութեան համար տուտերը նմանեցնում էր պողերի ու թռչունների կտուցի: Հայդին յանկարծ բացադանչում էր. «Վա այծ է, սա արծիւ է»:

Ճաշից յետոյ երեխաները մենակ էին մընում և Հայդին պատմում էր Կլարային Ալպեան սարերի մասին: Այդ պատմութիւնները այնպէս կենդանի կերպով լիշեցնում էին նրան երանց խրճիթն ու սարի վրայ ունեցած ազատ կեանքը, որ մէկ անգամ Հայդին վճռական կերպով ասաց. «Ես ուզում եմ տուն գընա»: Վաղը առաւտեան անպատճառ կերթամ:

Կլարան խնդրում էր նրան մնալ և սպասել Հայդիկի գալուն:

Ֆի անգամ ճաշից յետով, երբ Կլարան քնեց, չայդին միայնակ մնաց իւր սենեակում. նա չէր համարձակում վազվել այն ընդարձակ սենեակներում, որովհետև այնտեղ ամենից առաջ պահանջում էր հանդիստ նստել, Սերաստեանի հետ խօսելը նոյնպէս արդելուած էր:

Ահա այդ ժամանակ չայդին մտածում էր թէ այժմ ինչպէս լաւ է Ալմի վրայ. ամեն տեղ ծածկուած է կանաչով և զոյնզոյն ծառ զիկները դարդարում են դաշտերը. սարերն ու հովիտները լցուած են արեւի լուսով: Ի՞նչպէս աղատ և թեթև է շանչ քաշում մարդ: Ի՞նչ պէս լաւ էր, ինչպէս ուրախ էր այնտեղ աղատութեան մէջ: Եւ չայդին սաստիկ ցանկութիւն զգաց հալրենիք վերադառնալու: Զէ որ մօրաքոյը նրան ասել էր, որ երբ ուղենայ կարող է գնալ: Չայդին այլ ևս չկարողացաւ համբերել: Նա իւր կարմիր թաշկինակի մէջ կապեց հացի կտորները և կարմիր յարդէ զըլ-խարկը ծածկելով՝ տանից դուրս եկաւ: Որսվ հետև չայդին մտքում դրել էր անսլատճառ սպիտակ հաց տանել տատին, այդ պատճառով նա երբեմն սեղանից ծածուկ վերցնում էր իւր

բաժնի մնացորդը և գրպանը դնում. այդպիսով նա բաւական շատ կտորներ էր հաւաքել պահանում:

— Ո՞ւր ես գնում, զուաց օրիորդը նոյն րոպէին ներս մտնելով, այդ ինչ է նշանակում, չ՛ որ ես քեզ արգելել եմ փազոց դուրս դալ. Աջմոլիկի նման էլ որ հագնաւել ես:

— Ես փողոց չէի գնում, ես ուզում եմ տուն դնամ, շփոթուած խօսեց չայդին:

— Ի՞նչպէս, դու ուզում ես տուն դնաս, փախչես ալստեղից. ինչո՞ւ հայար. քիզ հետ աւելի լաւ չեն վարուած, քան թէ ինքդ արժանի ես. մի բանի կարօտութիւն ունիս: Գէհ, խօսիր, ինչո՞ւ ես լռում:

Հայդին այլ ես չկարողացաւ իրան զսպել և թափեց բոլորը, ինչ որ կուտակուել էր նրա սրտում:

— Ես՝ ուզում եմ տուն դնամ, ասաց նա. Ձւնիկը առանց ինձ լաց կըլինի, Պետրոսը կըծեծէ այծերին, պապս կընեղանայ, որ ես այսքան ուշացայ, տատս էլ սպասում է ինձ, այսքան ուշացայ, տատս էլ սպասում է ինձ, այստեղից չի երեւած, թէ արեւն ինչպէս «բարի զիշեր» է ասում սարերին...

«Տէր ողորմած Աստուած, այս աղջիկը ցնորուել է», ինքն իրան մտածեց օրիորդը, իսկ Հայդիին դառնալով մեղմ ձայնով ասաց.

—Աղելհայդ, հիմա տուն դնալու ժամանակ չէ, բարձրանանք վերև:

Հայդին հնապանդուեց. Նա հառկացաւ որ իրան տուն չեն թողնի. դլուխը կախ ձգած դանդաղ քայլերով բարձրացաւ. սանդուխտներով և առանց ձայն հանելու իւր սենեակը մտաւ:

Այդ օրը Հայդին լուռ ու հանգիստ նստած էր: Միւս օրը օրիորդը յայտնեց ուսուցչին բոլոր եղելութիւնը. նրա կարծիքով Հայդին ցնորուած էր, և խորհուրդ էր հարցնում ուսուցչից, թէ ինչպէս վարուէ նրա հետ: Ուսուցիչը նրան հանդաստացրեց, թէ ինքը արդպիսի բան չի կատել երեխալի մէջ. այլ նրա զիշաւոր պակասութիւնն այն է, որ մինչև այժմ նա չի կարողանում կարդալ սովորել:

Օրիորդը մի փոքր հանդարտուեց: Կոյն օրը երբ նա կարդի էր բերում Հայդիի պահարանը, տեսաւ կապոցը լի հացի կոորներով. աղախնին կանչեց և հրամայեց որ իսկոյն դուրս տանէ ու ժամփէ: Հայդին դրա վրայ դառը լաց եղաւ:

—Ես այդ հաւաքեցի տառիս համար, ասում էր նա, բոլորը խլեցին ինձանից, հիմա էլ ինչ տանեմ նրան:

Վլարան նրան շատ էր խղճում:

—Ֆի լար, Հայդի, մխիթարում էր նա, ես խօսք եմ տալիս, որ գնալուդ ժամանակ տատիդ համար շատ բուլկի կառնեմ, բոլորը թափաւ և փափուկ: Թէհ, դադարիր լաց լինելուց:

—Դու կըտաս ինձ այնքան հաց, որքան ես ունէի:

—Այն, աւելի էլ կըտամ, միայն թէ մի լար: Հայդին ընթրիքին նստած էր լուռ և կարմրած աչքերով: Նա իւր առջև սպիտակ հաց տեսնելով նորից մտաբերեց իւր կապոցը. արտասուքը նրան խեղդում էր, ուզում էր լաց լինել, բայց չէր համարձակում, որովհետեւ նրան պատուիրուած էր հանդիստ նստել սեղանին:

տոյ կըզամ և յուց կըտամ, ինչ որ բելել եմ  
քեզ համար:

Պ. Զեղեմանը դնաց սեղանատուն, այն-  
տեղ էր և օրիորդը, որի վհատուած դէմքի  
արտայախութիւնը տեսնելով՝ հարցրեց պատ-  
ճառը:

— Պ. Զեղեման, իօսեց օրիորդը հանդիսա-  
ւոր կերպով, մենք խաբուած ենք ամենախ-  
տառակ կերպով:

— Ինչու ենք խաբուած, հարցրեց պ. Զե-  
ղեմանը զինու բաժակը դատարկելով:

— Ինչպէս ձեզ յայտնի է, պ. Զեղեման,  
մենք վճռեցինք Կլարայի համար ընկերուհի  
վերցնել, կարծելով որ նա կըլինի մի ոչ երկրա-  
վին արարած, որպիսիները ապրում են սարի-  
օգով, մինչև անդամ հողի հետ չշփուելով:

— Ես կարծում եմ, հեղնօրէն նկատեց պ.  
Զեղեմանը, որ շվեցարացի երեխաները երբ ման  
են զալիս, շփուում են հողի հետ. ապա թէ ոչ  
են զալիս, շփուում են հողի հետ չշփուելով:

— Այս, պ. Զեղեման, դոք շատ լաւ  
հասկանում եք ինձ, ես խօսում եմ այն վեճ

## Պ. ԶԵՂԵՄԱՆԻ ՎԵՐՍԴԱՐՅԼ

**Ա**յսդ դէպքերից միքանի օր յետոյ պ.  
Զեղեմանը վերադարձաւ իւր ճամբորդութիւնից:  
Ամենից առաջ նա մտաւ աղջկայ սենեակը:  
Կլարան քնքոյշ սիրով բարեեց հօրը. իսկ չայ-  
գին, որ ըստ սովորութեան իւր ընկերուհու մօտ  
էր նստած, մի անկիւն քաշուեց:

— Սա է մեր փոքրիկ շվեցարուհին, ասուց  
պ. Զեղեմանը, մօտեցիր այստեղ, տռար ինձ քո  
ձեռը, այսպէս: Այժմ ինձ ասա Կլարան և  
դու բարեկամացաք, չէք կռւում իրաք հետ:

— Ո՛չ, Կլարան շատ բարի է, պատաս-  
խանեց չայցին:

— Մենք իրար հետ երբէք չենք կռւում,  
հայրիկ, շտապով վրայ բերեց Կլարան:

— Ճատ լաւ, շատ լաւ, այժմ ինձ կըներես,  
Կլարիկ, դնամ մի փոքր բան ուտեմ, իսկ յե-

արարածների մասին, որոնք լինում են գաղափարական հողիների նման:

— Կլարան ինչ պիտի անէր գաղափարական հողիների հետ, շարունակեց հանաք անել պ. Զեղեմանը:

— Ես ամենևին հանաք չեմ անում, պ. Զեղեման, դործը աւելի լուրջ է, քան թէ դուք կարծում էք. մենք սարսափելի կերպով խաբուած ենք:

— Բայց ինչ սարսափ կայ. այն երեխայի մէջ ես սարսափելի ոչինչ չտեսայ, նկատեց պ. Զեղեմանը:

— Նրա վարժունքը, նրա նկատ ու կացը, իմ կարծեքով ոչ մի խելքը գլխին երեխայ չի կարող ունենալ. դա մի տարօրինակ երեխայ է:

— Ներեցէք, օրիորդ Նատալիա, ես ուղում եմ Կլարային էլ հարցնել նրա մասին, տեսնեմ, նա ինչ կարծիքի է:

Այս ասելով նա վեր կացաւ ու դնաց աղջկայ մօտ. Հայդին նրան տեսնելով, իսկոյն գուրս եկաւ այստեղից:

— Թէ՞ւ, սիրելի Կլարիկ, ասաց պ. Զեղեմանը աղջկայ մօտ նստելով, պատմիր ինձ ան-

կեղծօրէն ինչով է յանցաւոր ընկերուհիդ, օրիորդը ինչու է նրան խելագար համարում:

Կլարան վերջին խօսքի վրայ շատ ծիծաղեց. նա մանրամասն պատմեց հօրը, ինչ որ պատահել էր նրա բացակայութեան ժամանակ. պատմեց նոյնպէս Հայդիի և օրիորդի վերջին խօսակցութիւնը, որից օրիորդը ենթադրել էր նրա ցնորուիլը, պ. Զեղեմանը փառ-փառ ծիծաղում էր:

— Ուրեմն զու չէիր ցանկանայ, որ երեխային տուն ուղարկէի, հարցըց հայրը:

— Աչ, ոչ խնդրում եմ, հայրիկ, չեռացնես չայդիին այստեղից. նրա հետ միշտ ուբախ նես Հայդիին այստեղից. նրա հետ միշտ ուբախ եմ լինում. ամեն օր նա որևէ է նոր բան է պատմում ինձ:

— Լաւ, Կլարիկ, ես կըկատարեմ քո ցանկութիւնը:

Նոյն օրը պ. Զեղեմանը յայտնեց օրիորդին, որ Հայդին կըմնայ իրանց տանը, որ ինքը գտնում է նրան բոլորովին առողջ և Կլարայի համար յարմար ընկերուհի:

— Խնդրիմ քաղցրութեամբ վարուէք Հայդիի հետ և շատ էլ չշփոթուէք նրա վարմունդիի:

Քի պատճառով։ Իսկ եթէ դժուարանում էք  
նրանց հսկողութիւնը, շուտով մայրս դալու է  
և նա կօգնէ ձեզ։

Վերջին խօսքերը, ըստ երևոյթին, օրիոր-  
դին բոլորովին հանգստացրին։

Պ. Զեղեմանը երկար ժամանակ չմնաց  
տանը. երկու շաբաթից յետոյ նա մի կարևոր  
դործով գնաց Փարիզ։ Իսկ նրա դնալուց մի-  
քանի օր յետոյ նամակ ստացուեց տիկին Զե-  
ղեմանից, թէ արդէն դուրս է եկել իւր կա-  
լուածքից և խնդրում էր կառք ուղարկել եր-  
կաթուդու կայարանը։

Կլարան անչափ ուրախ էր. նա ամբողջ օրը  
չայդիի հետ միայն իւր տատի մասին էր խօ-  
սում։ Իսկ օրիորդը բացատրեց չայդիին. որ նա  
ո. Զեղեմանին «տատ» չպիտի կանչէ, այլ  
«յարգելի տիկին»։

Չայդիին շատ էլ գուր չեկաւ այդ բանը,  
բայց ինչ կարող էր ասել, նա լուռ ու մունջ  
մտաւ իւր սենեակը քնելու։



## ԿԱՐԵՎՈՅԻ ՏԱՏԸ

Մ իւս օրը պ. Զեղեմանի տանը մեծ  
պատրաստութիւն էին տեսնում։ Երևում էր՝ սոյն-  
պիսի հիւրի էին սպասում, որ ամենքից յար-  
գանք էր վայելում։

Նրա համար մի առանձին սենեակ պատ-  
րաստեցին. օրիորդը ինքն էր հսկում և կար-  
գագրութիւններ անում։ Ահա լսուեց և կառքի  
ձայնը, Սեբաստեանը վաղեց գուռը բանալու։  
Կարծում էին որ տատը ամենից առաջ կլա-  
րավի սենեակը կըմտնի և կըբարեհաճէ նրա  
մօտ առանձին մնալ. այդ պատճառով չայդիին  
հրամայուած էր իւր սենեակում սպասել մինչեւ  
որ կանչէին։ Բայց չայդին երկար չսպասեց.  
շուտով աղախինս եկաւ նրան կանչելու։

Չայդին նոյն ըոպէին կլարավի գուան  
ետեն էր գտնուում. երբ ներս մտաւ, տատը ոի-  
լով նայեց նրան ու ասաց.

Դրանցից մեջ մեջին

— Վօտեցիր ինձ, որդիս, տուր ձեռդ մի  
նայեմ քեզ:

— Բարի օր, «յարդելի տիկին», ասաց չուց-  
դին խորը զլուխ տալով:

— Միթէ ձեր զիւղում այդպէս են խօսում,  
այդ որտեղ ես լսել:

— Ոչ, մեզ մօտ այսպէս չեն խօսում, պա-  
տասխանեց Հայդին լրջութեամբ,

— Եւ ոչ մեզ մօտ, ծիծաղելով ասաց տատը.  
ես բոլոր երեխաների համար տատն եմ և քեզ  
համար նոյնպէս, համաձայն ես:

— Այ՞ս, պատասխանեց Հայդին:

Տատն այնպէս սիրով ու փաղաքշանքով  
էր վալուում Հայդիի հետ, որ երեխան իսկոյն  
սիրեց նրան:

— Ենունդ ինչ է, հարցրեց տատը:

— Հայդի:

— Աղելհայդ, ուղղեց օրիորդը, որ նոյն  
ըռպէին սենեակ էր մտնում, ես դրան արգե-  
լել եմ այդ անունով կոչուելու, մի տեսակ վատ  
է հնչում:

— Սիրելի օրիորդ Նատալիա, ընդդիմախօ-  
սեց տ. Զեղեմանը, նրան միշտ Հայդի են կան-

չել և նա ընտելացել է այդ անուանը. Հիմա  
մենք ինչու պիտի փոխենք:

Միւս օրը, ճաշից յետոյ Կլարան՝ ըստ իւր  
սովորութեան՝ քննեց, իսկ սատը զնաց սեղանա-  
տուն. բայց այնտեղ ոչոքի չգտնելով՝ գնաց և  
օրիորդի սենեակի դուռը զարկեց:

— Հայդին ո՞րտեղ է, կամ ինչ է շինում:

— Կա իւր սենեակումն է: Ա՛ս, տ. Զեղե-  
ման, եթէ իմանալիք, թէ նա ինչ անկարգու-  
թիւններ է անում. .

— Հաւատացնում եմ ձեզ. որ եթէ ես լի-  
նէի նրա տեղ, նոյնը կանէի: Ենկարելի է երե-  
խային միայնակ թողնել առանց որևէ զբաղ-  
մունքի: Բերէք նրան ինձ մօտ, ես լաւ գրքեր  
ցոյց կըտամ նրան:

— Գրքելն ինչ հարկաւոր է նրան, բա-  
ցագանչեց օրիորդը, նա մինչև այժմ չկարողա-  
ցաւ կարդալ սովորել, նա ոչ մի բանի ընդու-  
նակ չէ, այս բանին կարող է վկայել և ու-  
սուցիչը:

— Զարմանալի բան է, աղջկը ըստ երե-  
լոյթին բթամիտ չէ. բերէք նրան այսուեղ-  
դոնէ պատկերները կըդիտէ:

Այս ասելով նա գնաց իւր սենեակը, որտեղ միքանի բոպէից յետոյ մտաւ և չայդին: Տատը մօտ կանչեց նրան և տուեց մի մեծ պատկերազարդ գիրք նայելու: Աղջկայ տխուր գէմքը մի փոքր կենդանութիւն ստացաւ և աչքերը փայեցին ուրախութիւնից: Իսկ երբ նա նկարների մէջ տեսաւ սարերի պատկերը, յիշեց իւր սիրած հայրենի սարերը և աց եղաւ: Տատը նայեց պատկերի վրայ և տեսաւ, որ այստեղ նկարուած էր սարի արօտատեղին, որտեղ արածում էին այծիրն ու ոչխարները. հօտի մէջ կանգնած էր հովիւր և իւր գաւազանի վրայ յենուած՝ նայում էր հեռաւոր սարերին, որոնք զարդարուած էին մայր մտնող արելի վերջին ճառագայթներով: Տատը չայդիլ ձեռիցը բռնելով՝ քաշեց գէպի իրան և փաղաքշելով ասաց.

— Այդ պատկերը քեզ մի բան է յիշեցնում, երեկոյեան երբ կըդաս ինձ մօտ, ես կըպատմեմ քեզ թէ այդ և թէ միւս պատկերների մասին. իսկ այժմ հանդստացիր և լսիր, քեզ հետ խօսելու եմ: Այսպէս, ուրախ եղիր: Ասա ինձ, չայդի, ինչպէս ես սովորում և ինչ զիտես արդէն:

— Դեռ ոչինչ, հառաջելով ասաց չայդին, ես առաջ էլ գիտէի, որ այդ անկարելի էր:

— Ի՞նչն է անկարելի, չայդի, ինչի մասին ես խօսում:

— Անկարելի է կարդալ սովորել, սաստիկ գժուար է:

— Դժուար է, այդ որտեղից գիտես:

— Ի՞նձ Պետրոսն է ասել, նա փորձեց սովորել, բայց չկարողացաւ:

— Հայդի, ի զուր ես հաւատում որևէ Պետրոսի. դու անուշադիր ես եղել դասի ժամանակ, դրա համար չես կարողացել սովորել:

— Միևնուն է, բան չէր դուրս դայ, ընդդիմախօսեց հայդին:

— Զէ, սիրելիս, ասաց տատը, եթէ քո Պետրոսին հաւատաս, դու երբէք բան չես սովորի, իսկ եթէ ցանկութիւն ունենաս, ամենակարճ ժամանակում կարող ես սովորել. այն ժամանակ դու կըկարդաս բոլորը, ինչ որ զբուած է այդ պատկերների մասին: Աշխարհումս դեռ էլի շատ շատ գրքեր կան. երեակալարի ինչքան հետաքրքիր և օգտաւէտ պատմութիւններ կարող ես կարդալ: Միթէ չարժէ սովորել: Ես

քեղ կընծայէի այդ գերքը և գու կըկարդալի՞ր  
այն հովուի մասին, նրա կեանքի և արկածների  
մասին: Թէ՛, ասա, ուզում ես սովորել:

Հայդին լարուած ուշաղրութիւնով լսում  
էր տատին. վերջը խորը հառաջելով ասաց.

— Ո՛հ, եթէ կարողանայի կարդալ սովորել...

— Կըսովորեսո, հայդի, հաւատա ինձ. այժմ  
վերցրու այդ պատկերազարդ գերքը և դնանք  
կլարայի մօտ:

Տ. Զեղեմանը հայդիի ձեռիցը բռնելով  
գնաց կլարայի սենեակը:

Այն օրից, երբ հայդին ուզում էր փախ-  
չել, և օրիորդը նրան ետ դարձրեց, նա շատ  
էր փոխուել: Հայդին հասկացաւ, որ իրան չեն  
թողնի տուն գնալու և ստիպուած կըլլնի եր-  
կար ժամանակ մնալ Փրանկֆուրտում, կարելի  
է և ընդ միշտ: Հայդին օրէօր աւելի էր տըլս-  
րում: Վիշերները երկար ժամանակ երեակայում  
էր իւր հայրենի Ալմը, նրա աչքի առաջ պատ-  
կերանում էին իւր սիրած կանաչազարդ սարերը  
և արևի տակ փայլող նրանց ձիւնապատ գա-  
գաթները: Հայդին երազում էր կայտառ սիծե-  
րի, կարմիր ապառաժների, թաւշի նման դաշ-

տերի և գոյն-գոյն ծաղիկների մասին: Նա  
քաղցրութեամբ և ցաւօք սրտի մտաբերում էր  
պապի դաժան դէմքը, նրա հազուագէպ փա-  
ղաքշանքները, կոյր տատին, լուիկ Պետրոսին  
և բոլոր հոգով ձգտում էր դէպի նրանց: Առա-  
ւոտը զարթելով՝ նա երեակայում էր իրան  
քեռու խրճիում և սաստիկ ցանկանում էր  
դուրս վազել կանաչ եղենիների տակ թարմ օդ  
ծծելու... Այն ինչ իրականութիւնն այս էր. նա  
պառկած է մեծ մահճակալի վրայ, շքեղ տան  
մէջ, Փրանկֆուրտ քաղաքում, Ալմից հեռու:  
Այդ ժամանակ հայդին գլուխը սեղմում էր բար-  
ձին և դառը լաց լինում:

Կեանքի այս տեսակ դրութիւնը վատ ազ-  
գեցութիւն ունեցաւ նրա առողջութեան վրայ.  
Նա նիշարեց, գունատուեց. ճաշին համարեա  
ոչինչ չէր ուտում և իւր սովորական կայտա-  
ռութիւնն էլ կորցըց: Տ. Զեղեմանը նկատեց  
նրա տիրութիւնը. նա կարծում էր թէ ինքն  
իրան կանցնի, բայց ոչ մի վոփոխութիւն չե-  
ղաւ. իսկ երբ տեսաւ որ առաւտուները արտա-  
սուալի աչքերով է դուրս դալիս հայդին, կան-  
չեց իւր մօտ և ասաց.

— Հայդի, ասմ ինձ, ինչու ես վշտանում  
Հայդին պատասխան ըտուեց:

— Բայց կարելի է Կլարային կասես, շաք  
րունակուեց տատը:

— Ոչ, ես ոչոքի չեմ ասի, միևնույն է, ինձ  
ոչոք չի օգնի, պատասխանեց Հայդին յուսա-  
հատ ձախով:

Տ. Զեղեմանը շատ խղճաց նրան:

— Լսիր, որդեակս, ասաց նա աղջկան  
գրկելով, ես զուշակում եմ քո տիրութեան պատ-  
ճառը. երբ դու պապի մօտ էիր ապրում, սո-  
վոր էիր շարունակ վազվել և զուարձանալ,  
իսկ այժմ ամբողջ օրը տանն ես և դրա համար  
տիրում ես: Բայց մտածիր, որ դու փոքրիկ չես,  
ժամանակ է որ դու մարդկանց հետ ապրես և  
ոչ թէ այծերի հետ: Եթէ դու մեղ մօտ մի-  
քանի տարի մնաս, կըսովորես կարդալ, գրել,  
կարել, զործել և երբ կերթաս պապի մօտ, դու  
նրան լաւ օգնական կըլինիս: Երեակայիր թէ  
նա ինչպէս կուրախանայ, երբ նրա համար  
տաք գուլպաներ կըգործես, շապիկ կըկարես,  
իսկ ձմեռուայ երկար երեկոները որևէ բան  
կըկարդաս:

Հայդիի աչքերում վառուեց վաղուց հան-  
գած կրակը:

— Այն ժամանակ ես տատի համար էլ կը-  
կարդամ նրա Հին, սեւացած դիրքը, խօսեց նա  
յուզուած ձախով:

— Ի հարկէ, և տատի համար օգտակար  
կըլինիս: Երեակայիր՝ ինչպէս կուրախանան  
ամենքը, երբ փոքրիկ, տգէտ Հայդիի փոխարէն,  
նրանց մօտ կըվերադառնայ իսելօք ու աշխա-  
տասէր մի աղջիկ:

— Իսկ այդ շնուտ կըլինի, տատի, յուզուած  
հարցըց Հայդին:

— Եթէ դու ուշադիր լինիս գասին և ըլ-  
ծուլանաս, կարելի է շուտ լինի. իսկ ճաշից  
ինտոյ կըզաս ինձ մօտ, ես քեզ կարել և դոր-  
ծել կըսովորեցնեմ:

Այս խօսակցութիւնից երկու շաբաթ յե-  
տով, ուսուցիչը զարկեց տ. Զեղեմանի սենեակի  
դուռը: Երբ նա ներս մտաւ տիկինը քաղցրու-  
թեամբ ձեռը մեկնեց ասելով:

— Սիրելի ուսուցիչ, համեցէք, նստեցէք,  
լոյս ունիմ որևէ վատ լուր չէք հաղորդելու ինձ:

— Ընդհակառակը, ու. Զեղեման, խօսեց ուսուցիչը, մի անհաւատալի և անսպասելի բան պատահեց:

— Միթէ Հայդին սովորեց կարդալ, ընդհատեց նրան տատը:

— Այս, այս, այս արդէն գարմանալի բան է: Աղջիկը որ չնայած իմ այնքան աշխատանքին, ոչ մի տառ չկարողացաւ սովորել, այժմ մի երկու շաբաթուայ ընթացքում կարողանում է վանկերով կարդալ: Իմ կարծիքով ձեր շնորհիւ, տիկին, անկարելին կարելի դարձաւ:

— Աշխարհում շատ հրաշքներ է պատահում, ասաց տատը, ես շատ ուրախ եմ, որ Հայդին այդպիսի յառաջադիմութիւն է արել:

Ուսուցի գնալուց յետոյ տատը մտաւ Կլարսի սենեակը. Հայդին նրա մօտ նստած կարդում էր մի փոքրիկ պատմութիւն և ինքն իրան դարմանում, թէ ինչպէս անիմաստ տառերից ամբողջ բառեր էին կազմւում, այն էլ իւր ծանօթ առարկաների անունները:

Այն երեկոյին ընթրիքի սեղանի վրայ Հայդին ամանի մօտ դրուած էր մի գեղեցիկ պատկերագր զիրք: Հայդին հարցական հայեաց-

քով նայեց տատին. վերջինս քաղցրութեամբ ժպտաց ու ասաց.

— Դա քոնն է:

— Ընդ միշտ, կարմղ եմ և տուն տանել, հարցրեց Հայդին ուրախութիւնից կարմրելով:

— Ի հարկէ, ընդ միշտ, հաստատեց տատը, վաղուանից կըսկսենք կարդալ:

— Բայց դու տուն չես գնայ, Հայդի, այնպէս չէ, աւելացրեց Կլարան: Երեւակայիր, ինչպէս դժուար կըլինի ինձ համար, երբ տատս գնայ: Դու ինձ չպիտի թողնես, Հայդի:

Հայդին երբ գնաց իւր սենեակը, քնելուց առաջ երկար ժամանակ լժերթում էր իւր ընձան և ուրախանում նրա վլայ:

Ենուհետև տատը ամեն երեկոյ իւր մօտ էր կանչում նրան ու ասում.

— Հայդի, կարդա քո գրքից ինձ համար որևէ պատմութիւն:

Այդպիսի բոպէներում Հայդին իրան շատ երջանիկ էր զգում. նա հպարտութեամբ բաց էր անում գլերքը և սկսում կարդալ. տատը չհասկացած տեղերը բացատրում էր նրան և իրանից էլ լրացնելով պատմութիւնը աւելի հետաքրքիր դարձնում:

Վիւս օրը, դասից յետոյ Հայդին ասաց  
Կլարալին.

Ժ.

## ՀԱՅԴԻՆ ՏԽՐՈՒՄ Ե

 ատը սովորութիւն ունէր, որ երբ կլա-  
րան հաշից յետոյ քնում էր, ինքը մտնում էր  
իւր սենեակը և Հայդին էլ կանչում. նա նրան  
մի սիրուն տիկնիկ էր ընծայել, որի համար  
Հայդին շորեր էր կարում. այդպիսով Հայդին  
սովորեց ասեղ բռնել: Բայց նրան աւելի հե-  
տաքրքրում էր ընթեղանութիւնը և ամեն մի  
լարմար ըոպէին բերում էր զիրքը և տատի  
մօտ նստելով՝ կարգում իւր սիրած պատմու-  
թիւնները:

Տ. Զեղեմանը կէս տարի անց կացրեց երե-  
խաների հետ:

Արդէն հասել էր նրա գնալու օրը: Կլա-  
րայի և Հայդիի համար շատ տխուր օր էր:  
Տատի գնալուց յետոյ տան մէջ դատարկութիւն  
և մեռելութիւն տիրեց, երեխաները մի տեսակ  
մոլորուած էին, չգլուխէին ինչով դրադուեն:

— Ուզում ես քեզ համար կարդամ:

Կլարան սիրով համաձայնուեց. բայց այս  
անգամ ընթեղանութիւնը երկար չտևեց: Պատ-  
մութիւնը մի մեռնող տատի մասին էր, և  
Հայդին երբ կարդաց, որ նա արդէն մեռաւ,  
յանկարծ լաց եղաւ:

— Տատս մեռաւ, ես այլ ես չեմ տեսնի  
նրան, հաց էլ չեմ տանի, խեղճ տատիկս:

Հայդին չէր կարողանում կարդացածը ջո-  
կել իբականութիւնից: Կլարան դարմացած՝ հա-  
մոզում էր նրան, որ զրքւմ ուրիշ տատի մա-  
սին է խօսում: Սրտասուքը հեղեղի նման թափ-  
ում էր Հայդիի աչքերից: Նա սաստիկ կարօ-  
տել էր ազգականներին և վախենում էր նրանց  
կորցնել. պապը կը մեռնի, տատը նոյնպէս և  
նա էլ երբէք չի տեսնի նրանց: Ալմի վրայ  
լուռութիւն կըտիրէ, ինչպէս զերեզմանում, իսկ  
նա աշխալհիս վրայ էլ ոչոք չի ունենալու:  
Այս վիշտը չէր կարողանում կլարալին յայսնել.  
Էս վիշտը չէր կարողանում կլարալին յայսնել.  
Էս վիշտը չէր կարողանում կլարալին յայսնել.

իմանալով թէ չայդին ինչի համար է լաց լինում, խստութեամբ ասաց.

— Ագելհայդ, բաւական է լիմարութիւններդ. եթէ միւս անդամ էլ տեսնեմ, որ դու կարդալիս այդպիսի անկարգութիւն ես անում, զիրքդ բոլորովին կըխեմ:

Հայդին աչքերը սրբեց, հեկեկանքը զսպեց ու լռեց:

Առհասարակ, նա այժմ սովորել էր իրան յաղթել, թէև դրա համար մեծ ճիշ էր գործ դնում: Կլարան շատ անդամ էր նկատել, ինչպէս նրա դէմքը ջղածդութեամբ փոփոխում էր և նա հարց էր տալիս.

— Հայդի, ինչո՞ւ այդպէս ծամածութիւններ ես անում:

Այս բոլորը Հայդին էժան չնստեց: Նա օրէօր նիկարանում և գունատում էր. ախորժակն էլ կորցրեց. շատ քիչ էր ուտում, այն էլ ստիպուած: Հայդին միեւնոյն ժամանակ չմոռացաւ տատի խօսքերը, նա ամենայն ուշադրութեամբ պարապում էր ուսուցչի հետ. աւելի եռանգով կար էր անում բայց հայրենիքի տեսչը քանի դնում, աւելի էր յաղթահարում նրան: Ցերե-

կով էլլի մի կերպ համբերում էր, բայց զիշերները համարեա միշտ արտասուած աչքերով էր քնում: Առաւօտները զարթելով՝ նա մտարերում էր իւր ուրախ երազները, որոնց մէջ տեսնել էր իրան Ալմի վեայ ազատ անհոդ լժոչնակի նման: Եւ նա նորից սկսում էր լաց լինել, զըլուխը բարձի մէջ կոխելով, որ ոչք չլսէ նրան:

Ժամանակն սիցնում էր. Հայդին չէր իմանում, արգեօք սկսուել է ձմեռը թէ ոչ, որովհետեւ տունը շրջապատուած էր ահազին պատով, չէր երեռւմ թէ ինչ է կատարում փողոցում: Երբեմն նա Կլարայի հետ զբունում էր կառքով, բայց այդ շատ սակաւ և կարճ էր կառքով, բայց այդ շատ սակաւ և կարճ ժամանակով էր լինում: Հայդին ազահութեամբ ժամանակով էր գեղեցիկ փողոցների վրայ խօսի որոնում էր գեղեցիկ փողոցների վրայ ինտիգոնէ մի նշան, բայց ի զուր: Տեսնում էր միայն շատ ժողովուրդ, կառքեր, լաւ լաւ շինութիւններ և հէնց այդ քարաշէն պատերը սեղմում էին նրա կուրծքը և ազատութեան սաստիկ հանկութիւն ճնշում նրա սիրտը: Նրան հրացանկութիւն ճնշում նրա սիրտը:

Այսպէս անցաւ ամառը, աշունը և ամբողջ ձմեռը: Արևը դարձեալ սկսեց պայծառ կերպով լուսաւորել տան պատերը, և չայդին դիտէր, որ շուտով կըգայ այն ժամանակը, երբ Պետքար իւր հօտը պիտի քշէ դէպի սարը: Այստեղ հիմա դաշտը կանաչին է տալիս. կապոյտ ծաղկները բարձրացրել են իրանց գլխիկները և ուրախ նայում արեւին. եղենիները զարթել և ուրախ աղմկում. իսկ զարդարուն սարերը շողշողում են վարդաղոյն արշալոյի փայլից: Չայդին աչքերը ծածկում էր ձեռով, որ չտեսնէ, թէ ինչպէս արեւը ուկէզօծում է նրա սենեակի պատերը: Կա երկար ժամանակ նստում էր անշարժ, մինչև կլարան կամ մէկ ուրիշը ընդհատում էր նրա տխուր մտատանջութիւնը:

---

Չայդին այն աստիճան հալուեց ու մաշուեց հալրենիքի կարօտով, որ անկարելի էր նրան տեսնել և չխղճալ. նոյն իսկ օր. Նատալիան՝ որ միշտ իւստ էր վարուել երեխալի հետ, այժմ սկսեց աւելի քաղցրութեամբ վարուել: Շաշին առանձին ուշադրութիւն էր դարձնում նրա վրայ, իսնդրում էր որ զոնէ իւր սիրած կերա-

կուրներից ուտէ, բայց չայդին որքան էլ աշխատում էր, չէր կարողանում. ամեն բանից զգուել էր: Օրիորդը վախեցաւ, թէ մի գոցէ լուրջ կերպարանք ստանալ նրա հիւանդութիւնը, և անմիջապէս գըեց պ. Զեղեմանին երեխալի գրութեան մասին:

Պ. Զեղեմանը երկու օրից յետոյ եկաւ, հրաւիրեց բժշկին, որ քննելով չայդիին՝ հետևեալ եղբակացութեան եկաւ. — Երեխան սաստիկ կարօտութիւն է զգում իւր հալրենիքին, այդ պատճառով այսպէս հալումաշ է եղել և կմաղք գառել. ուրեմն շուտով պէտք է օգնել: Ուղարկեցէք սրան իւր հալրենի սարերը. այս հալրենիք սրան իւր հալրենի սարերը. այս նեարդային քայքայուած գրութեանը հանգստացնելու միակ միջոցը: Լաւ կըլինի հէնց այսօր ուղարկէք. ահա իմ խորհուրդը:

Պ. Զեղեմանը տեղից վեր թռաւ ու սկսեց անհանդիստ կերպով անց ու դարձ անել սենեակում:

— Ի՞նչպէս, գոռաց նա, ուրեմն երեխան հիւանդացել է վշտից, ուժասպառ է եղել իմ տանը և մինչև այժմ անուշադիր է թողած: Եւ դուք, պ. բժիշկ, կարծում էք, որ ես երեւ գուք, պ. բժիշկ, կարծում էք, որ

Խալին այսպէս կըթողնեմ գնալու, ոչ, ոչ. պէտք է յանձն առնէք նրան բժշկել, իւր նախկին առողջութիւնը վերականդնել. այն ժամանակ միայն ես կուղարկեմ նրան հայրենիք:

—Պ. Զեղեման, մտածեցէք թէ ինչ էք անում: Ա'սր, դա այնպիսի հիւանդութիւն չէ, որ բժշկական դեղերն օգնեն, այլ բաւական է որ երեխան շնչէ սարերի կազզուրող օդը, որին նա սովոր է եղել և ինքն իրան կառողջանայ: Նա այստեղ երեք չի առողջանայ, իսկ եթէ միքանի ամիս էլ մնայ, դժուար թէ էլ երբեկ յէ տեսնէ իւր պապին:

«Ի. Զեղեմանը վախեցաւ:

—Եթէ դա միակ միջոցն է երեխային ազատելու, այն ժամանակ ես կըվարուեմ այնպէս, ինչպէս դուք խորհուրդ էք տալիս:

Այսպէս վճռելուց յետոյ, բժիշկը մնաս բարով առաց ու գնաց: Իսկ պ. Զեղեմանը նախ օրիորդին կանչեց իւր մօտ և յայոնեց, որ չափին հէնց այսօր պէտք է տուն ուղարկել. յետոյ գնաց Կլարայի մօտ, որ նրան էլ բացատրէ:

—Լսի՞ր Կլարիկս, ասաց նա, այս ըսպէին բժիշկն ինձ յայտնեց, որ եթէ մեր փոքրիկ

չափին հայրենիք չուղարկենք, նրա հիւանդութեան հետևանքը շատ վատ կըլինի: Երևի դու էլ ես խղճում նրան, այնպէս չէ. խեղճուկը շատ է հալուել հայրենիքի վշտից ու կարօտից: Ահա այդ պատճառով վճռեցի հէնց այսօր ուղարկել նրան իւր պապի մօտ:

Այս լուրը սաստիկ վշտացրեց Կլարային: Բայց հօր բացատրութիւնը նրան բոլորովին համոզեց, որ չափին անկարելի էր իրանց մօտ թողնել. մասաւանդ այն ժամանակ հանդուսացաւ, երբ հայրը խստացաւ մի անդամ հիւր տանել նրան չափիի մօտ:

Կլարան յայտնեց իւր ընկիրուհուն այս տխուր նորութիւնը, որի վրայ չափին անչափ ուրախացաւ, նա համարեա թէ իրան կորցրեց չափաղանց ուրախութիւնից:

Հայդիի մօրաքրոջ Նունէին էլ կանչեցին և բացատրելով բանի էութիւնը՝ խնդրեցին որ նա տանէ երեխալին: Նունէն լաւ յիշում էր քեռու վերջին խօսքերը, այդ պատճառով կըաքառու չափիին ուղեկցելու: Այդ ժամանակ ժարուեց չափիին ուղեկցելու: Այդ ժամանակ ըսպէ. Զեղեմանը Սեբաստեանին հրամայեց, որ շուտով պատրաստութիւն տեսնէ ճանապարհ ընկերով պատրաստութիւն տեսնէ ճանապարհ ընկերով:

նելու: Իսկ ինքը նստեց իւր գրասեղանի առաջ  
մի նամակ գրեց քեռուն և ծրարը կնքելուց  
յետով, մի քառակուլ էլ փող փաթաթեց, լաւ կա-  
պեց ու նամակի հետ միասին Սեբաստեանին  
յանձնեց տանելու:

Մինչդեռ հայրը դանազան կարգադրու-  
թիւններ էր անում, Կլարայի ցանկութեամբ  
Հայդին ճանապարհորդական սնդուկը բերել դրին  
էին նրա մօտ և Կլարան ինքն էր դարսում  
իւր ընկերուհու շորերն ու ընծաները: Հայդին  
իւր սենեակը վագեց և բարձի տակից տ. հե-  
ղեմանի ընծայած գիրքը վերցնելով՝ բերեց դր-  
բեց միւս բաների հետ. նա չմոռացաւ իւր հին  
գլխարկնու կարմիր շալը. թէև օրիորդը չէր թոլ-  
նում այն պատառոտած բաները տանելու, բայց  
Հայդին երբ շատ խնդրեց, օրիորդը թող տուեց:  
Կլարան բաց արեց մի զամբիւղ և Հայդին  
ցոյց տալով՝ ասաց.

— Հայդի, այս էլ տատիդ համար կըտանես  
Հայդին նայեց և ուրախութիւնից սկսեց  
թուշկոտել. զամբիւղի մէջ դարսած էր տասն  
և երկու սպիտակ կլոր բուլկիներ:

Երեխաները ուրախութիւնից մոռացել էին

որ շուտով բաժանուելու են: Բայց նրանց եր-  
կար ժամանակ չժողին միասին, յանկարծ դըմ-  
սից կանչեցին.

— Հայդի, դուրս եկ, կառքն արդէն պատ-  
րաստ է:

Հայդին մնաս բարով ասաց Կլարային և  
դուրս եկաւ:

Երբ ամեն բան դարսեցին կառքի մէջ և  
Հայդին նստեց, պ. Զեղեմանը նրա ձեռը սեղ-  
մեց ու ասաց, որ ինքը և Կլարան միշտ կը-  
լիշեն նրան: Հայդին ի սրտէ շնորհակալութիւն  
յայտնեց նրան:

— Բարի՛ ճանապարհ, ասաց պ. Զեղեմանը,  
և կառքը շարժուեց:

Մի ժամից յետով Հայդին նստած էր եր-  
կաթուղու վագոնում և ծնկների վրայ դրած,  
ամուր բունել էր իւր թանգարին զամբիւղը, ո-  
րով բուլկիներ էր տանում տատին:

Այժմ միայն Հայդին խելքի եկաւ և հաս-  
կացաւ, որ գնում է տուն, իւր հայրենի սարերը:  
Ճանապարհին նա շփոթուած հարցրեց.

— Սեբաստեան, ինչ էք կարծում, տասս  
կենդանի՞ է:

— Ի հարկէ հանգստացրեց նրան Սեբաս-  
տիանը, միամիտ կացէք, նա անպատճառ կեն-  
դանի կըլինի:

Հայդին քիչ ժամանակ խորասուզուելով  
մտածմունքի մէջ՝ կըլին հարցրեց.

— Սեբաստեան, չէ՞ կարելի հաստատ իմա-  
նալ թէ արդեօք կենդանի՞ է տատս:

— Այո՛, այո՛, պատասխանեց նա կիսաքուն,  
անհանդիստ մի լինէք, նա կենդանի՞ է:

Ճուտով Հայդիի քունն էլ տարաւ: Նա  
երկար ժամանակ քնած էր, իսկ երբ զարթեց,  
արդէն բաւական ճանապարհ անցել էին: Վեր-  
ջապէս Մայնֆելդ հասան. Հայդին վեր թռաւ  
տեղից և զամբիւղը ձեռլին դուրս եկաւ վագոնից.  
Սեբաստեանն էլ սնդուկը դուրս բերեց, կայարա-  
նի առաջ դրեց և մտածում էր, որ դեռ բաւա-  
կան ճանապարհ կայ ոտով անցնելու և մարդ  
էր որոնում, որ իրան ճանապարհ ցոյց տար  
Դերֆլի գնալու: Այն ժամանակ մի սայլ նկա-  
տեց, որի վրայ արդէն բարձել էին ալիւրի տոսու-  
րակներ և տէրը պատրաստում էր նստելու,  
Սեբաստեանը մօտեցաւ նրան և հարցրեց.

— Զէք կարող ինձ մի աներկիւղ ճանա-  
պարհ ցոյց տալ Դերֆլի դնալու:

— Այստեղ բոլոր ճանապարհներն աներ-  
կիւղ են:

Այն ժամանակ Սեբաստեանը խնդրեց, որ  
ամենայարմար ճանապարհը ցոյց տայ, որովհե-  
տեւ սնդուկն էլ շալակած պիտի տանէ և վա-  
խեսում է որևէ անդուդ ընկնելուց:

Անծանօթը յախոնեց որ ինքն էլ գնում է  
Դերֆլի և եթէ սնդուկը շատ ծանը չէ, կարող  
է իւր սայլի վրայ գնել:

Սեբաստեանը շատ ուրախացաւ և խնդրեց  
որ Հայդիին էլ տանէ Դերֆլի և այստեղից Ալմը:

— Դերֆլից ինքս էլ կարող եմ դնալ Ալմը,  
ասաց Հայդին:

Սեբաստեանը մի տեսակ թեթևութիւն  
դաց, որովհետև շատ էր գժուարանում սարը  
սարձրանալ. նա վող ընծայեց սայլապանին,  
իստոյ աղջկան մի կողմ կանչելով՝ նրա ձեռի զամ-  
բիւղի մէջ դրեց նամակն ու քսակը և յալտնեց.

— Քայակի մէջ շատ փող կայ, լաւ պահե-  
ցէք, այդ պ. Զեղեմանն է ուղարկում քեռուն  
լնձալ:

Երբ սնդուկը դրին սալլի վրայ, չայդին  
էլ բարձրացաւ, յետոյ սալլապանը նստեց նրա  
կողքին և սալլը շարժուեց: Սեբաստեանը  
չայդին բարի ճանապարհ մաղթելով՝ ինքը  
վերադարձաւ կայարան, ուր պիտի սպասէր  
գնացքին:

Չայդիի ուղեկիցը հացավաճառ էր Թերֆին  
գիւղում, ուր և տանում էր ալիւրը: Նա երբէք  
չայդին չէր տեսել, թէև լսել էր նրա մասին:  
Իսկ այժմ գարմացած նայում էր նրան:

— Թու էիր ապրում քեռու մօտ, Ալմի  
վրայ, հարցեց նս աղջկան:

— Այս:

— Երևի քեզ համար այնքան էլ լաւ չէր  
քաղաքում, որ տուն ես վերադառնում:

— Ո՛չ, ինձ համար շատ լաւ էր Փրանկի-  
քուրտում:

— Ապա ինչու ես տուն գալիս:

— Պ. Զեղեմանն է ուղարկում ինձ տուն:

— Միթէ դու ինքդ ցանկացար տուն գալ:

— Ո՛հ, ես հազար անգամ լաւ եմ համա-  
րում տատի մօտ ապրել, ասաց չայդին:

«Միթէ սա ճշմարդաւ է խօսում», ինքն

իրան մտածեց հացավաճառը, յետոյ չիբունը  
վառեց և այլ ևս չխօսեց:

Չայդին իւր շուրջը նայեց. նա դողում էր  
ներքին յուղմունքից. նրան ծանօթ էլին այդ  
տեղերը, ճանապարհները, ծառերը, իսկ հեռ-  
ւում երեւում էլին «Բազէի բուն» կոչուած սա-  
րերը և առաջուայ նման լըրե հին բարեկամ-  
րերը նայում էլին նրան: Չայդիի համբերութիւնը  
ներ նայում էլին նրան: Հայդիի համբերութիւնը  
հատնում էր. նա ուզում էր դուրս թռչել սայ-  
ից և բոլոր ուժով դէպի վեր վազել, բայց ան-  
ցարժ նստած էր և բոլոր մարմնով դողում:  
շարժ նստած էր և բոլոր մարմնով դողում:  
Եկեղեցու ժամացոյցը հինգը զարկեց, երբ նրանք  
Դերֆիլ հասան: Հայդին իշաւ սալլից և հա-  
ցավաճառին շնորհակալութիւն յայտնելով՝ ասաց  
որ պապը կըգայ սնդուկը վերցնելու: Իսկ ինքը  
որ պապը կըգայ սնդուկը վերցնելու: Իսկ ինքը  
զամբիւղը ձեռին առաջ վազեց: Նա շատ յոդ-  
նեց, ուժասպառ եղաւ. տեղ-տեղ կանգ էր առ-  
նեց, որ մի փոքը շունչ առնէ: Ճանապարհն  
նում, որ մի փոքը շունչ առնէ: Բայց  
աւելի գիք և դժուարագնաց էր դառնում: Բայց  
չայդին միայն մի բան էր մտածում. «Երեօք  
կենդանին է տատը»: Ահա երևաց նրանց լիըր-  
ճիթը: Հայդիի սիրտը սկսեց կրկնակի արա-  
գութեամբ բարախել, նա վերջին ոյժը դորժ

դրեց և վերջապէս Հասաւ խրճթին: Գողդոջիւն ձեռով բաց արեց զուռը և հազիւ շունչ քաշելով ներս ընկաւ:

— Տէր Աստուած, լսուեց սենեակի անկիւնից, մեր չայդին առաջ այսպէս էր թռչկոտում: Ախ, եթէ կեանքումս գննէ մի անգամ լսէի նրա ձայնը: Այդ մի էր:

— Ես եմ, տատի, ես, աղաղակեց չայդին և պառաւի առաջ ծնկաչող ընկնելով՝ սկսեց նրա ձեռները համբուրել. նա ուրախութիւնից էլ չէր կարողանում խօսել: Տատը նոյնպէս անկապ էր խօսում. շոյում էր նրա մազերն ու ձեռները և ջերմ համբուրում նրա երեսը:

— Այս նրա ձայնն է, նրա մազերն է: Փառք Քեզ Աստուած, փառք Քեզ: Եւ նրա աչքերից աբտասուքի երկու կաթիլ ընկաւ չայդիի ձեռին: Այս դժու ես, սիրելի աղջիկս, միթէ դու ես, չայդի:

— Այն, ալո՞ւ, տատի ջան, ես եմ, մի լար: Ես դարձեալ ամեն օր կրգամ քեզ մօտ. էլ ուրիշ տեղ չեմ գնայ: Նայիր, տատի, ինչ եմ բերել քեզ համար. սև չոր հացից ձանձրացել ես, քեզ սպիտակ բուլկի եմ բերել:

— Ախ, զաւակս, աղաղակեց տատը, աշխարհիս վրայ դու ամեն բանից թանգ ես ինձ հանիս վրայ դու ամեն բանից թանգ ես ինձ համար. և դրկելով նրան կրկին ու կրկին համբուրում էր:

— Չայդի, հոգիս, խօսիր, պատմիր, ես ուզում եմ քեզ լսել:

Չայդին պատմեց թէ ինչպէս ինքը անհանգիստ էր նրա մասին և թէ ինչպէս շտապում էր նրան տեսնելու: Այդ ժամանակ ներս մտաւ Պետրոսի մայրը, որ չայդիին տեսնելով զարմացած մնաց:

— Չայդի, միթէ այդ դու ես, ինչպէս լուս ընկար այստեղ:

Չայդին ձեռ տուեց նրան, համբուրուեցին և Մարթան շարունակեց.

— Մարթիկ, եթէ տեսնէիք թէ չայդին ինչ լաւ շոր ունի հագին, ինքն էլ ինչպէս մեծացել ու սիրունացել է. հազիւ կարելի է նրան ճանառու չել: Իսկ այս փետուբով գլխարկն էլ քոնն է, չայդի. ծածկեր, տեսնեմ, քեզ սազ է գալիս:

— Չեմ ուզում, վճռական կերպով ացաց չայդին, վերցրու քեզ համար. ինձ հարկաւոր չէ, ես իմս ունիմ:

Հայողին լիշում էր, թէ ինչպէս պապը  
նրանից բաժանուելիս լայտնեց, որ չի ուզում  
նրա գլխին տեսնել փետուրներով դլխարկ: Մար-  
թան չէր ուզում վերցնել. նրա կարծիքով այդ  
գլխարկը իւր համար շատ ճռիս էր. դրան մի-  
այն կարելի էր լաւ գնով ծախել: Հայողին իրանն  
արաւ. գլխարկն աննկատելի կերպով մի տեղ  
դրեց. յետոյ իւր վրայի շորերը հանեց, մնաց  
միայն շրջազգեստով ու շապկանց մերկ լժեե-  
րով, վրայից իւր հին կարմիր շալը դցեց և  
տատի ձեռը բռնելով ասաց.

— Այժմ ես գնում եմ պապի մօտ. վաղը առաւտեան դարձեալ կրգամ: Բարի գիշեր, տատիք:

— Ե'կ, չայդի, եկ, սիրելիս, ասում էր  
պառաւը երեխայի ձեռք սեղմելով:

- Ճորդինչու հանեցիր, հարցվեց Մարթան:
- Այսպէս աւելի լաւ է, պապս չէր կարող ինձ ճանաչել: Եւ նա կրկին անգամ բարի զիշեր մաղթելով՝ գուրս եկաւ խրճիթից և զամբիւղ ձեռին սկսեց բարձրանալ դէպի վերին Ալմը:

Մայր մտնող արել իւր վերջալոյսը սփռել  
էր կանաչազարդ Նլմի վրայ, և սարերի ձիւ-

Նապատ գագաթները շողշողում էին: Հայդին  
Տաճախ կանգնում էր և իւր շուրջը նայում.—  
Խոտերն ու ժայռերը կարմրին էին տալիս և  
«Բազէի բուն» կոչուած սարի սուր գագաթները  
վառում էին երկնքում: Հայդին քարացել կանգ-  
նել էր և հրճուանքից զզացուած՝ արտասուքի-  
ներ կաթիլներն ընկան նրա աչքերից: Այս նրա  
սիրելի պատկերն էր, որ կարօտով մտաբերում  
էր օտարութեան մէջ: Նա արտասուալից աչ-  
քերը բարձրացրեց դէպի երկինքը, բայց խօսք  
չէր զտնում, թէ ինչպէս շնորհակալութիւն  
յայտնէ Աստծուն, որ կրկին արժանացրեց նրան  
հայրենիքը տեսնելու և նրա զեղեցկութեամբ  
հիանալու: Այն ժամանակ միայն Հայդին կա-  
րողացաւ շարունակել իւր ճանապարհը, երբ  
վերջալուր բոլորովին հանգաւ: Նա սկսեց արա-  
գութեամբ բարձրանալ: Ահա երևացին թաւա-  
մազ եղենիների գագաթները, երևայ կտուրը  
և վերջապէս խրճիթը. իսկ խրճիթի առաջ նըս-  
տած էր պապը և ձեռին չիբուխը բռնած՝ խո-  
րասուզուած նայում էր իւր առաջ: Հայդին ոչ  
թէ գնում, այլ թռչում էր. և մինչդեռ քե-  
ռին կըսթափուէր իւր մտածմունքներից, Հայ-

Դին թռաւ նստեց նրա ծնկների վրայ և հետևալ խօսքերը միայն կարողացաւ արտասանել:

—Պապի՛ ջան, սիրելի՛ պապի:

Պապը լուռ գրկեց աղջկայ գանգրահեր դլուխը. նա էլ յուզմունքից չկարողացաւ խօսել, միայն նրա աչքերը արտասուքով լցուեցին: Յետոյ նա չայդիին նստեցնելով իւր ծնկան վրայ երկար ժամանակ նայում էր նրան:

—Թու կրկին եկար ինձ մօտ, չայդի, ասում էր նա. բայց ինչո՞ւ. ուրեմն դու յարմար չեր մեծ տան համար և քեզ ե՞տ ուղարկեցին:

—Ո՞չ, պապի, տաք-տաք խօսեց չայդին, նրանք ամենքն էլ բարի էին և' կլարան, և' նրա տատը, և' պ. Զեղեմանը. բայց դիտես ինչ, պապի, ես սաստիկ կարօտեցի քեզ: Եւ մի առաւօտ պ. Զեղեմանը կանչեց ինձ... սակայն այս նամակում ամեն բան դրուած. կըլինի:

չայդին գետին թռաւ և զամբիւղից նամակն ու քսակը հանելով լանձնեց պապին:

—Այդ քոնն է, ասաց պապը քսակը դնելով նստարանի վրայ, յետոյ նամակը կարդաց և առանց ձայն հանելու գրպանը դրեց:

—Ուրեմն դու առաջուայ նման ինձ հետ



կալթ կը լսմես, այնպէս չէ, չարի: Դէ՛հ, վերց-  
րու փողերդ և ներս մտնենք. զրանով քեզ հա-  
մար մահճակալ կառնես և շորեր միքանի-  
տարուայ համար:

— Ո՛չ, ինձ հարկաւոր չէ մահճակալ, իսկ  
Կլարան այնքան շորեր դարսեց սնդուկս, որ  
դեռ երկար ժամանակ կը բաւէ:

— Բայց և այնպէս վերցրու, պահիր, մի  
օր պէտք կը դայ:

չարին վերցրեց քսակը և պապի հետ-  
ներս մտաւ խրճիթը: Նա խրճիթի բորոր անկիւն-  
ները նայեց, յետոյ սանդուխքով վերև վազեց-  
խոտնոցը, բայց այնտեղից վշտայած աղաղակեց.

— Պապի, անկողինս չկայ այլ ևս:

— Իջիր այստեղ, ես չկտէի թէ զու կը-  
գաս: Ե՛կ, առաջ կալթ խմիր:

չարին իջաւ: Նա նստեց իւր բարձր ա-  
թոռի վրայ և ագահութեամբ խմեց կալթը:  
Յետոյ ամանը դրեց սեղանի վրայ և խորը հա-  
ռաչելով ասաց.

— Ո՛հ, պապի, մեր կալթից քաղցր ոչինչ  
չկայ աշխարհիս երեսին:  
Յանկարծ Պետրոսի սուլոցը լսուեց, չայ-

դին խկոյն դուրս վագեց: Այծերը խայտալով  
իջնում էին սարից. նրանց հետևում էր Պետ-  
րոսը, որ Հայդիլին տեսնելով աչքերը չռեց և  
կարծես քարացաւ կածդնած տեղում:

— Բարի երեկոյ, Պետրոս, կանչեց Հայդին  
և առաջ վագեց ու խառնուեց հօտի մէջ:

— Ճէկօ, Պօզօ, դուք ինձ ճանաշնում էք:

Այծերն խկոյն ճանաչեցին նրա ձայնը և  
մօտից էլ չէին հեռանում. քսւում էին նրան,  
լիզում ձեռները և ուրախութիւնից թշկոտում  
ու բառաջում: Հայդին ուրախ ծիծաղում էր և  
աշխատում ազատուել նրանց փաղաքշանքնե-  
րից. նա այնպէս էր շրջապատուած այծերով,  
որ չկարողացաւ Պետրոսին մօտենալ, որը դեռ  
ևս անշարժ կանդնած էր:

— Մօտեցիր, Պետրոս, տուր ձեռդ, կան-  
չեց Հայդին:

— Դու կրկին այստեղ ես, ասաց Պետրոսը  
նրան բարեելով. դու էլլ կըգա՞ս ինձ հետ արօտ,  
վաղը կըգա՞ս, Հայդի, հարցըց Պետրոսը:

— Վաղը չեմ կարող, ես տատի մօտ կըլի-  
նիմ, խոլ միւս օրը կըգամ:

— Ճատ ուրախ եմ, որ քեզ դարձեալ այս-

տեղ եմ տեսնում. բացազանչեց Պետրոսը և  
այծերին կանչեց, որ տուն գնան:

Բայց այծերն այլ ևս չէին հնազանդում  
նրան. նրանք չէին ուզում Հայդիից բաժանուել  
և շուրջը թուշկոտում ու չարութիւններ էին  
անում: Հայդին ստիպուած եղաւ Պօզօի ու  
Ճէկօի հետ քողում պահուելու և այն ժամա-  
նակ միայն Պետրոսը կարողացաւ միւսներին  
հանգստացնել ու տանել:

Հայդին երբ խրճիթ վերադարձաւ, պապն  
արդէն պատրաստել էր նրա համար անկողին  
հոտաւէտ խոտի վրայ: Հայդին վաղուց էր որ  
այդպէս անուշ չէր քնիլ: Նրա կաթողին ցան-  
կութիւնը կատարուեց. նա կրկին տեսաւ վեր-  
ջալուսով վառուած իւր սիբած սարերը, մօտից  
լսում էր եղևնիների աղմուկը և զզում էր, որ  
ինքը հայրենի խրճիթումն է, պապի մօտ:

~~Վայուած այ Գրիգոր ին զիւ~~

~~Համար այս այս այս այս~~

ներ երբէք չի կերել ինքը. միայն ափսոսում է,  
որ շուտ է վերջանալու, որից յետոյ ու չոր հաց  
ուտելը աւելի գժուար կըլինի:

—Գիտես ինչ կանեմ, տատի, ասաց Հայ-  
դին, ես կըզբեմ Կլարային, որ ինձ շատ շատ  
բուլկիներ ուղարկէ:

—Այդ շատ լաւ միտք է, Հայդի, ասաց  
Պարթան, բայց մինչև այստեղից այստեղ կը-  
հասնի և բոլորը կուտուի կըվերջանայ, շատ  
կըզորանայ, ուրեմն այդպէս անյարմար է: Եյս-  
տեղ, Թերֆլումն էլ կայ մի հացավաճառ, որ  
ուղիղ այդ տեսակ բուլկիներ է թխում, բայց  
նրանք թանդ են, իսկ ես հազիւ կարողանում  
եմ ու հաց առնել:

—Ա՛խ, տատի, ուրախ աղաղակեց աղջիկու,  
չէ՞ որ ես շատ փող ունիմ, այժմ գիտեմ թէ  
ինչի վրայ կըծախսեմ այն. ամեն օր մի-մի  
թաժայ բուլկի կառնեմ քեզ համար, և այս  
Պետրոսը կարող է անել, նա այսուհետեւ ամեն  
օր Թերֆլից բուլկի կըբերէ:

—Ո՛չ, սիրելիս, ասաց տատը, այդ փողերը  
մի ծախսիր, տուր պապին, նա աւելի հարկա-  
ւոր բանի վրայ գործ կըդնէ:

## ԺԱ.

ՊԱՊԻ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԹԵՐՖԼԻ ԳԻՒՂԻ

 այդին իրանց խրճիթ մօտ կանդնած  
անհամբեր սպասում էր պապին: Ինքը պիտի  
դնար տատի մօտ, իսկ պապը Թերֆլի զիւղը  
Հայդիի թողած սնդուկը բերելու:

Հայդին շտապում էր տատին տեսնել, որ  
իմանար թէ ինչպէս է հաւանիլ իւր բերած  
բուլկիները:

Վերջապէս քեռին դուրս եկաւ և նրանք  
ուղևուսեցին դէպի ներքին Ալմը: Պետրոսինց  
խրճիթ մօտ նրանք բաժանուեցին և Հայդին  
ներս վագեց տատի մօտ: Տատը իսկոյն ճանա-  
չեց նրա ոտի ձայնը և բացազանչեց.

—Այդ դու ես, աղջիկս, էլի եկա՞ր ինձ մօտ:

Յետոյ նա ամուր բունեց Հայդիի ձեռները,  
կարծես վախենում էր թէ կըխլեն նրանից և  
լայտնեց երեխային, որ այնպէս համով բուլկի-

ֆայց չայդին նրան չէր լսում և շարունակում էր.

— Ո՞հ, այժմ տատու ամեն օր թափայ բուլկի կունենայ, նա էլի կառողջանայ: Ո՞հ, տատի, կարելի է այնպէս առողջանաս, որ աչքերդ էլ տեսնեն, հա:

Տատը լոեց, որովհետեւ չէր ուզում աղջկան վշտացնել: Յանկարծ չայդիի աչքովն ընկաւ հին աղօթագիրքը և ուրախութեամբ աղղակեց.

— Տատի, ես հիմա կարդալ գիտեմ, ուզմում ես քո հին գրքից բան կարդամ:

— Ա՞խ, խնդրում եմ կարդաս. բայց միթէ դու իսկապէս սովորեցիր կարդալ:

Հայդին վերցրեց թողոտ աղօթագիրքը և հարցրեց տատին, թէ ինչ կարդայ:

— Կարդա ինչ որ ուզում ես, զաւակս:

Հայդին թերթում էր զիրքը:

— Այսոեղ արեկի մասին է խօսում, կարդամ: Եւ Հայդին սկսեց կարդալ:

Պուրբ-Դրքի խօսքերը լսելով՝ տատի երեսը փայլեց ուրախութիւնից, իսկ աչքերից արտասուրքի կաթիլներ թափուեցին: Երբոր Հայդին

վերջացրեց, նա խնդրեց որ կրկին կարդայ, և Հայդին կարդաց:

— Ո՞հ, Հայդի, եթէ իմանաս թէ ինչպէս փառաւորուեց հոգիս:

Հայդին զարմացած էր մնացել տատի հայեաց քի փոփոխութիւնից. Նրա երեսը ուրախութիւն էր արտայալտում. կոյր աչքերը փայլում էին և կարծես մութ խրճիւ առաստաղի միջից տեսնում էր երկինքը:

Վաղուց էր քեռին չէր խօսել Դերֆլիի ընակիչների հետ. նա սովորաբար գիւղի միջով անցնելիս՝ յօնքերը այնպէս կիտած էր լինում, որ ոչ ոք չէր համարձակուում նրան մօտենալ: Բայց այս անգամ, երբ նա գնաց հացավաճառի մօտ Հայդիի սնդուկը վերցնելու, մի անսպասելի բան պատահեց: Նա որքան էլ աշխատում էր բան պատահեց: Նա որքան էլ աշխատում էր յօնքերը կիտել, այնուամենայնիւ ուրախութեան յօնքերը կիտել, այնուամենայնիւ ուրախութեան յօնքերը կիտել, այնուամենայնիւ ուրախութեան յօնքերը կիտել, այնուամենայնիւ ուրախութեան յօնքերը կիտել:

— Քեռի, բարեկամաբար սկսեց խօսել Հացավաճառը, ուրախ էք ձեր թոռնիկի դալուն:

Ի՞նչ լաւ աղջիկ է. ճանապարհին ես Հիանում  
էի նրա վրայ:

Ուրախութեան ժամանակ փայլեց պապի  
երեսին:

— Ճնորհակալ եմ, բարեկամ, որ երեխայիս  
բերեցիք: Այս ասելով նա կռացսու չայդիի ոըն-  
դուկը վերցնելու:

— Քեռի, սնդուկը շատ ծանր է, ասաց  
հացավաճառի կինը, դժուար թէ կարողանաք  
տանել: Սպասեցէք, մեր բանուորին կանչեմ  
որ տանէ:

— Ո՛չ, հարկաւոր չէ, վճռական կերպով  
պատասխանեց ծերունին:

— Գո՞նէ մի թեթև սնդուկի մէջ դարսե-  
ցէք միջի եղածը, ես կըտամ ձեզ. իսկ ձեր  
սնդուկը մի ուրիշ անգամ տարէք:

Քեռին չէր կարողանում իւր դարմանքը  
ծածկել: Նա մինչև հիմա ամենքին չար և  
նենդաւոր էր կարծում, իսկ այժմ այս մարդն  
ու կինը այնպէս բարի հայեցքով են նայում  
նրա վրայ և իրանց ծառաւութիւնն առաջար-  
կում: Նա շնորհակալութեամբ վերցրեց նրանց  
առաջարկած թեթև սնդուկը և ամեն բան մէջը

տեղաւորելով՝ ուղևորուեց դէպի տուն: Քեռուն  
ճանապարհ ձգեցին սիրալիք ողջոյններով, որոնք  
նա վաղուց արդէն մոռացել էր:

Երեկոյեան վերջալոյսը նոր էր հանգել,  
երբ պապը մօտեցաւ Պետրոսից խրճթին: Հայ-  
դին նրան նկատելով՝ խոկոյն դուրս վագեց խրճ-  
թից, իսկ տատին խոստացաւ միւս օրն էլ գալ:

— Պապի, ճանապարհին ասաց չայդին, այն  
քսակի մէջ եղած փողերն ինձ տուր, ես ուզում  
եմ Պետրոսին ամեն օր միքանի կոպէկ տամ,  
որ տատի համար սպիտակ բուլկի առնէ:

— Իսկ մահճակալը, չայդի, ընդդիմախօ-  
սեց քեռին. աւելի լաւ է քեզ համար մի մահ-  
ճակալ առնես, նա բուլկիններից լաւ կըլինի:

Բայց չայդին էլ հանգստութիւն չէր տա-  
լիս պապին, հաւատացնելով որ այստեղ խոտի  
վրայ աւելի լաւ է քնում, քան Ֆրանկիքուր-  
փրայ աւելի լաւ է քնում, այնպէս թա-  
տում շըեղ մահճակալի վրայ, և այնպէս թա-  
խանձանօք էր խնդրում, որ պապը վերջապէս  
համաձայնեց:

— Փողերը քո՞նն է, ի՞նչ ուզում ես արա-  
կարող ես ամբողջ տարուայ ընթացքում հաց  
առնել տատիդ համար:

Հայդին սովորաբար ընթրիքի ժամանակ էր պատմում, թէ այդ օրը ինչպէս էր անց կացրել տատի մօտ:

— Ի՞նչպէս. միթէ դու կարդալ դիտես, զարմացած հարցրեց մի անգամ ծերունին. այդ լաւ է:

Հայդին պատմեց, թէ սկզբում ինչպէս դժուարանում էր սովորել և թէ յետոյ ինչպէս յանկարծ յաջողուեց նրան:

— Ես շատ ցաւում եմ, որ չկարողացայ սովորել լաւ գրել և կարել, տխրութեամբ խօսեց աղջկը: Ես այնպէս ուզում կի քեզ «օգտակար» լինել, ինչպէս ասում էր ինձ այնտեղի տատը, բայց չի աջողուեց. Ես չեմ կարող քեզ համար շապիկ կարել, դուլպաներ գործել, նամակներն էլ հազիւ թէ կարողանամ գրել: Յաւում եմ, որ այստեղ ոչ ոքից չպիտի կսրողանամ սովորել. և նա հառաջեց:

Ֆերունին չպատասխանեց աղջկայ դադարկախօսութիւններին. նա այնպէս խորասուգուել էր մտածմունքի մէջ, որ Հայդին վախեցաւ թէ ինքը նրան բարկացրեց և սկսեց նրան փաղաքշել:

Հետևեալ կիրակի օրը, վաղ առաւօտեան քեռին դուրս եկաւ խրճից և նայեց հեռաւոր շրջակալքը. արշալուսը նոր էր բացուել և իւր կենսատու ճառագայթները սփռել դիմացի սակենսատու ճառագայթները սու հովտի վրայ: Հեռուից զանգահարութերի ու հովտի վրայ: Հեռուից զանգահարութիւն էր լուռմ: Պապը յետ դարձաւ խրճիթն ու ասաց.

— Վեր կաց, Հայդի, արեւը դուրս է եկել: Ճորերդ հազիր, մենք այսօր կերթանք եկեղեցի: Հայդին ուրախութեամբ վեր թռաւ տեղից շահութ հագաւ առաջ գրանկֆուրտից բերած շուկապով հագաւ Գրանկֆուրտից բերած տօնի բերից մինը: Պապը նոյնպէս զարդարուեց տօնի շորով:

— Պապի, աղաղակեց Հայդին, ես քեզ ել-բէք այդպէս չեմ տեսել. ինչպէս սազ է գալիս քեզ նոր շորով:

— Քեզ էլ քո շորն է սազ գալիս. գէհ,

գնանք:

Նա Հայդիի ձեռիցը բռնեց և դնացին դէպի վար:

Գանի գնում աւելի լսելի էր դառնում զանգի զօղանչիւնը. Հայդին հիացած ականջ էր դնում այդ ձախին:

— Ի՞նչպէս են զանգահարում, պապի, այսօր երկի մեծ տօն է:

Դիբքլի գիւղի բնակիչները արդէն հաւաքուել էին եկեղեցում և ժամասացութիւնն էլ սկսուած էր, երբ պապն ու Հայդին մտան այնտեղ և նստեցին ետևի նստարանի վրայ:

Պատարագից յետոյ քեռին դուրս եկաւ եկեղեցուց և Հայդիի հետ ուղեղուեց դէպի քահանայի տուն: Քահանան մեծ սիրով ընդունեց նրան: Քեռին սկզբում շփոթուեց, որովհետև չէր սպասում այդպիսի ընդունելութեան:

— Տէր Հայր, ասաց նա, դուք երբ վերջին անգամ ինձ մօտ էիք, կարծեմ վիրաւորեցի ձեզ իմ աւելորդ խօսքերով, որի Համար ներողութիւն եմ խնդրում: Գուք այն ժամանակ ճիշտ էիք ասում. հէնց այս ձմեռ ես պիտի դիւդտեղափոխուեմ:

— Ես շատ ուրախ եմ, որ դուք Համոզուել էք, պատասխանեց քահանան. Վերջապէս զգացել էք որ հարկաւոր է մարդկանց հետ ապրել:

— Եթէ ինձ կըհարցնէք, ես արդէն ծերացել եմ, այնտեղ էլ շատ լաւ էր ինձ Համար, բայց ահա սրան (նա ձեռք դրեց Հայդիի գանդ-

րասհեր գլխին), ինչպէս երկում է, ուրիշ տեսակ կեանք է հարկաւոր. սա դեռ հիմա էլ հառաջանք է, թէ ոչ ոք չկայ որ իրան սովորացնէ. իսկ երբ կըմեծանայ, երեւ կըսկսէ ինձ բացնէ. իսկ երբ կըմեծանայ, երեւ կըսկսէ ինձ նախատիլ, որ ես ժամանակին չեմ հոգացել նրա ուսման մասին:

Քահանան բոլորովին համակարծիք էր, որ աղջկան հարկաւոր է ուսում տալ. Հայդիին փաղաքշելով՝ նրա ձեռիցը բռնեց և քեռու հետ դուրս եկան:

Հայդին այնպէս ուրախ էր, որ չնկատեց թէ ինչպէս բարձրացան այն ահագին զառիշտէ վերը: Երեակացեցէք՝ նա չպիտի բաժանուէր պապից, ոչ տատից, ոչ այն հրաշալի սարեւու պապից, ոչ իւր սիրելի այծերից և միենոյն ժարից, ոչ իւր սիրելի այծերից և միենոյն ժամանակ պէտք է սովորէր. նա կըմեծանար, ոչ մանակ պէտք է սովորէր. ինչ կըլինէր իբրև մի տգէտ աղջիկ, այլ ամենքին կըլինէր «օգտակար», ինչպէս խորհուրդ էր տալիս Փըրանկիքուրտի տատը:

— Սիրելի պապի, զոչեց Հայդին՝ Պետրոսինց բնակարանին մօտենայլով, չգիտեմ ինչպէս անեմ. ես սաստիկ ուզում եմ և տատին տեսանեմ. ես սաստիկ ուզում եմ և տատին տեսա-

նել ու ամեն բան պատմել նրան և՝ քեզ մենակ  
չեմ ուզում թողնել:

— Որ այդպէս է, ես էլ կըգամ քեզ հետ,  
ժպտալով ասաց պապը:

Եւ երբ խրճին մօտեցան, քեռին բաց  
արեց դուռը, ներս մտաւ ու ասաց.

— Բարեւ ձեզ, տաշի, ինչպէս է ձեր ա-  
ռողջութիւնը:

— Տէր Աստուած, սա քեռին է, գոչեց  
տատը. շատ ուրախ եմ, այժմ կարող եմ ձեզ  
շնորհակալութիւնս յայտնել մեզ արած լաւու-  
թիւններիդ համար. թող Աստուած ձեզ հատու-  
ցանէ, քեռի:

Տատը իւր դողդոջիւն ձեռը մեկնեց քե-  
ռուն և շարունակեց.

— Ես մի խնդիր ունիմ, քեռի, այն է՝ որ  
քանի կենդանի եմ, չայդիին ոչ մի տեղ չուղար-  
կէք, դրանով ինձ շատ կըվշտացնէք. ախր դուք  
չդիտէք, թէ ինչպէս եմ սիրում սրան:

Եւ նա գրկելով աղջկան՝ սեղմում էր կրծքին:

— Հանդիստ կացէք, տատի, ասում էր  
քեռին, ես ձեզ չեմ վշտացնի, մենք դեռ շատ  
տարիներ կապրենք միասին:

Այդ բոպէին Պետրոսը հեալով ներս ըն-  
կաւ և յոդնածութիւնից հաղիւ շունչ քաշելով՝  
փառաւոր կերպով հսնեց մի նամակ ու չայդիին  
յանձնեց: Ամենքն անհամբեր սպասում էին թէ  
ինչ կըլինէ: Հայդին բաց արեց ծրարը և սկսեց  
բարձրաձայն կարդալ: Նամակը Փրանկֆուրտից  
էր, չայդիի ընկերունէ Կլարալից: Նա գրում  
էր որ չայդիի գնալուց յետով ինքը շատ որիս-  
էր է, դրա համար էլ հայրը խոստացել է  
նրան, որ այս ամառը ջրերը գնալիս՝ միքանի  
օրով կացելեն չայդիին ու նրա պապին:

Այս նամակը այնպէս ուրախացրեց ու զար-  
մացրեց ամենքին, այնքան խօսեցին դրա մա-  
սին, որ մինչեւ անդամ քեռին էլ չիմացաւ, թէ  
ինչպէս աննկատելի կերպով ժամանակն անցաւ:  
Սրդէն երեկոյ էր, երբ նրանք բաժանուեցին  
միմեանցից: Տատը զգացուած ասաց քեռուն.

— Յոյս ունիմ, որ այսուհետեւ շուտ-շուտ  
կըտեսնուենք, քեռի. այնպէս չէ: Եկէք, երբ  
ժամանակ ունենաք և աղջկան էլ շուտ-շուտ ու-  
ղարկեցէք: Առանց դրան շատ տխուր եմ լինում:  
Քեռին խոստացաւ որ միշտ կացելէ նրան  
չայդիի հետ:

Երբ պապն ու թոռնիկը տուն էին գնում,  
հեռուից լսելի էր զանգահարութիւնը. իսկ արևի  
վերջալոյաք ուկեղօծել էր Ալմի խրճիթը իւր  
ճառագայթներով:

Հայդին ուրախութիւնից երգում ու թըռչ-  
կոտում էր, իսկ ծերունին խորասուզուած զը-  
նում էր թոռան հետ, և նրա դէմքը արտա-  
յայտում էր խորին բաւականութիւն:

Վ Ե Ր Ջ

Էջ.	տող.	տպուած է	պէտք է մնի
10	22	եկել . . . . .	եկել ես
11	7	բաժանելու . . . . .	բաժանուելու
13	17	տեղ . . . . .	տեղը
17	11-12	այնպէս . . . . .	այնպէս
20	10	խոր քունը . . . . .	խորը քուն
,	15	շտուանչում . . . . .	շտուանչում
21	2	մինչեւ . . . . .	մինչեւ
23	19	դարձեալ . . . . .	դարձեալ
24	15	հայդի . . . . .	հայդիի
25	4	ծաղիկներ . . . . .	ծաղիկները
,	13	կողմ . . . . .	կողմը
,	22	լուռթեան . . . . .	լուռթիւն
30	5	վունը . . . . .	տուն
,	20	կապոյա . . . . .	կապոյտ
32	,	քունը . . . . .	քուն
38	13	քեզ . . . . .	քեզ համար
,	23	մանրամասութեամբ .	մանրամասուու-
			թեամբ
45	1	շատ . . . . .	շատ
60	5	Զեղեմանին . . . . .	Զեղեմանին
61	20	զանգակատունը .	զանգակատունը
63	12		
,	15		
66	3	տանը . . . . .	տանը
67	9	հայդի . . . . .	հայդիի
,	,	կատուի . . . . .	կատուիների
,	13-14	ծնկների . . . . .	ծնկների
,	14	առջեր . . . . .	առջեր
68	1	նս . . . . .	իս
69	1	դժոն . . . . .	դժոն
,	21	գնամ . . . . .	գնալ
73	5	հայդի . . . . .	հայդի,
74	1	թ. . . . .	թ.
79	1	թ. . . . .	թ.



Что бы было погоды вчера  
вчера вчера было вчера  
и вчера вчера было вчера

Пифе:

Убийца убийца убийца  
Убийца убийца убийца  
Убийца убийца убийца

И Супер!

Чтобы было вчера  
было вчера было вчера  
и вчера было вчера  
было вчера было вчера  
было вчера было вчера  
было вчера было вчера



1501